

Եւ այսպէս, վանականութիւն ու մշակոյթ, կրօնք եւ Ազգութիւն՝ հրաշալիօրէն եկան համադրուիլ փոքրիկ Հայաստանի կամարներուն տակ, անձնանուէր ու եռանդուն գործունէութեամբը համեստ վանականներուն:

Վանականութիւն ու Մշակոյթ. այլ բառերով՝ կրօնք եւ Հայրենիք. ահա՛ Ս. Ղազարցիներու գաղափարական դրօշակին երկու գոյները:

Միտքաբար Արքաիայր սովոր էր իր աշակերտները խրատել, նմանցնելով զանոնք քոչուրի մը, որուն համար երկու քեւեր են հարկաւոր. սրբութիւն եւ գիտութիւն: Առաջինը՝ կրօնքի արտայայտութիւնն է, վանականութեան սերտ ապրումով. երկրորդը՝ Հայրենիքի արտայայտութիւնն է, մշակոյթի համապարհով: Եւ այս երկուքին քեւահարումով պիտի մախրէ՛, սլանա՛յ քոչուրը՝ Միտքաբեան առաքելը, Միտքաբեան գիտնականը:

Այսպէս չէ՞ր միտքէ հարազատ պատմութիւնն ալ մեր հայրենիքի փառապանծ վանքերուն, որոնք մշակոյթի որբաններ էին եղած ժամանակին, հազարաւոր ձեռագիրներով եւ հարուստ մատենադարաններով: Ժամագիրք ու Պատմագիրք, Նարեկ ու Խորենացի, երկու ոսկեգրքոյկներն են եղած մեր բոլոր հայ վանականներուն:

Երբեմն, մրագի լոյսով, այդ վանքերու սուրբ կամարներուն տակ գրքուած ու ընդօրինակուած են մեր Պատմագրքերն ու Յայտնաւորքները, մեր Հառքնտիրներն ու Շարականները: Այժմ, Ս. Ղազարի վանականները, Արեւմուտքի լոյսին տակ, պիտի գային հաւաքել, կազմել, դասաւորել հայկական ձեռագիրներ ու հմանքնի պատահիկներ, գերագոյն գոհողութիւններով. պիտի գային գրել, վերակազմել, հրատարակել Հայոց պատմութիւնն ու աշխարհագրութիւնը, բանաստեղծութիւնն ու շարականը, քարգմանել մանաւանդ Հայոց գրական գանձարանը, հազարամեայ մեր մշակոյթը ծանօթացնելով Արեւմուտքի: Եւ հուսկ՝ ջանալով ստեղծել ծիածան կամուրջ մը հոգիներու միութեան, որ պիտի ըլլայ նուիրական ու գերագոյն ծաղիկը Հայոց կղզիին 250ամեայ աշխատանքին:

«Բազմավէպ»ի այս միացեալ բացառիկ քիւր, պատրաստուած՝ ազնիւ աշխատակցութեամբ Հայրենիքի, արտասահմանի եւ Ս. Ղազարի ուսումնասէրներուն – որոնց բոլորին կ'ուղղուի մեր ջերմ շնորհակալութիւնը – քող ըլլայ փոքրիկ ծաղկեպսակ մը Հայոց կղզիի վաստակաւոր Հայրերու լուսաշող նակատներուն, Միտքաբեան Միաբանութեան Ս. Ղազար կղզիին մէջ հաստատուելու 250ամեակին առիթով:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ԱԹՈՌԻՆ

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

(ԱՌՍՋԻՆ ՀԱԶԱՐԱՄԵԱԿ)

Գրեց՝ ԿԱՐԱՊԵՏ ԵՊՍ. ԱՄԱՏՈՒՆԻ

Ա.

ՊԱՏՐԻԱՐԿԱԿԱՆ ԱԹՈՌԻՆԵՐՈՒ ԾԱԳՈՒՄԸ

1. ՍԿՋՐՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Առաջին դարերուն, «Գործք Առաքելոց»ի վկայութեան համաձայն (Ի. 28), ղեկավարութիւն ունէին միայն եպիսկոպոսներ («ἐπίσκοποι»), լայն իմաստով՝ ընդգրկուած էին Ս. Հոգիէն՝ հովուելու համար Քրիստոսի հօտը, իբրեւ յաջորդներ Առաքելներուն, իրենց ղեկին ունենալով Հռոմի Քահանայապետը: Այս դասն էր՝ որ իրեն կը վերապահէր, աստուածային իրաւունքով, Եկեղեցին կառավարելու իշխանութիւնը:

Բուն «պատրիարքական» կոչուած աստիճանին չենք հանդիպիր:

Առաջին ժողովներուն, յաճախ ամէնէն ազգեցիկ եպիսկոպոսն էր, որ տարիքի բերումով կամ իր անձնական հեղինակութեամբ՝ կը նախադասէր, առանց Աթոռի նկատողութեան: Հետզհետէ, Երուսաղէմէն ետք, Արեւելքի միւս երկու գլխաւոր կեդրոններն ալ, Անտիոք՝ Ասորիքի համար, եւ Աղեքսանդրիա՝ Եգիպտոսի համար, իբր մեծ մայրաքաղաքներ, սկսան նախադասական պաշտօններ վարել: Այս-

պէս կազմուեցան երկու գլխաւոր Աթոռները, իշխանութիւն ունենալով իւրաքանչիւրն իրեն համապատասխան զոյգ աշխարհամասերու վիճակներուն կամ թեմերուն վրայ:

Դ. դարու սկզբնաւորութեան, Եկեղեցւոյ ազատ հռչակումէն ետք (313), Նիկիոյ տիեզերական Ա. ժողովին (325) չորրորդ կանոնը կ'ընդունէր Մետրապոլտական Աթոռներուն գերազանցութիւնը՝ եպիսկոպոսներու ընտրութեան մէջ. վեցերորդ կանոնով, նոյն ժողովը կը նուիրադրէր իրաւականօրէն նախադոյ կացութիւն մը, եւ կը ճանչնար Աղեքսանդրիոյ առանձնաշնորհութիւնները՝ Եգիպտոսի վրայ, նման անոնց, զոր կը վայելէր Հռոմը՝ Պատրիոյ մէջ. կը ճանչնար նաեւ Անտիոքի գերազանցութիւնը՝ Ասորիքի եւ Պաղեստինի համար, ինչպէս նաեւ արեւելեան ու դէպի հիւսիս երկարող հոլամասին վրայ: Եօթներորդ կանոնը կ'ընծայէր պատուոյ նախադասութիւն մը Երուսաղէմի, ու կը ճանչնար բոլոր այս Աթոռներուն աւանդական իրաւունքները՝ իրենց սահմաններու թեմերուն վրայ. ճշմարիտ իշխանութիւն մը («ἐξουσία»):

Ժողովական նման ճանաչում մը կ'ընդգրկէր ոչ միայն վերոյիշեալ երեք քաղաքները, այլ նաեւ, պատմաբաններու ընդհանուր կարծիքով, Եփեսոսը՝ Ասիոյ համար, Հերակլիան՝ Թրակիոյ համար,

և Կապադովկիոյ Կեսարիան՝ Պոնտոսի համար¹ :

Մետրապոլիտական այս իշխանութիւնը, գլխաւորապէս առաջին երկու քաղաքներուն համար՝ Պատրիարքական նկատուեցաւ : Ասիկա իր ծագումը կ'առնէր աւելի եկեղեցական աւանդութենէ մը, քան Պետրոսի Աթոռին կողմէ շնորհուած իշխանութենէ, երկու սկզբունքներէ ղեկավարուած : Նախ՝ Աւետարանի տարածումէն զոյացող հարկէ մը, քանի քրիստոնէութեան կեդրոնները կը յառաջանային դէպի Կայսրութեան հեռաւոր սահմանները : երկրորդ՝ Կայսրութեան ներքին հողային բաժանումներէն, որոնք Դիոկղետիանոսով (292) քաղաքական տասներկու քեմբեր կազմած էին :

Անոնցմէ երեք վերոյիշեալ թեմերու մայրաքաղաքները առաջիններն եղան մասնակի կարեւորութիւն մը ստանալու : Հռոմ՝ Պետրոսի յաջորդներուն Աթոռը : Աղեքսանդրիա եւ Անտիոք, որոնց Նուիրապետները կը կոչուէին «Մայրաքաղաքի Եպիսկոպոս» :

Հաւատքը Հռոմէն տարածուեցաւ Իտալիա, Գաղլիա եւ համայն Արեւմուտք : Անտիոքէն, որ Պետրոս առաքելի նախկին աթոռանիստն էր եղած, դէպի Եգիպտոս, Միջագետք, ինչպէս նաեւ հարաւային Հայաստան : Աղեքսանդրիայէն, որ Պետրոսի աշակերտին՝ Մարկոսի աթոռն էր, Եգիպտոսի մէջ :

Ուրիշ մայրաքաղաքներ աւելցան այս առաջիններուն վրայ : Եփեսոս՝ Յովհաննէս առաքելի Աթոռը, Ասիոյ մէջ : Կապադովկիոյ Կեսարիան՝ Պոնտոսի մէջ : Հերակլիա՝ Թրակիոյ համար : Կոստանդինոսեան խաղաղութենէն ետք, ասոնց դերը հետզհետէ մեծցաւ շրջակայ թեմերուն վրայ, իրենց վարչական կարեւորութեան պատճառով : 330ին, երբ Կոստանդինոս կայսրութեան մայրաքաղաքը փոխադրեց Բիզանդիոն, ասիկա ալ չէր կրնար չստանալ կարեւորութիւն մը՝ Եկեղեցւոյ նուիրապետական կազմին մէջ :

Տիեզերական Բ. Ժողովը, 381ին, իր երկրորդ կանոնին մէջ՝ այսպէս կը մեկ-

նաբանէ Նիկիոյ վեցերորդ կանոնը, թէ Աղեքսանդրիոյ Եպիսկոպոսը պիտի վարէր Եգիպտոսի թեմը, Անտիոքի Եպիսկոպոսը պիտի կառավարէր Արեւելքը, այսինքն Ասորիքը, Միջագետքը, Փոքր Ասիոյ հարաւը : Եփեսոսինը՝ Ասիոյ թեմը, Կեսարիոյ Եպիսկոպոսը՝ Պոնտոսը, իսկ Հերակլիայինը՝ Թրակիան :

Եփեսոսի Ժողովը, 431ին, բաժնեց Կիւրոսը Անտիոքի իրաւասութենէն, դարձնելու համար զայն «ինքնավար» Եկեղեցի մը :

Արեւելեան այս հինգ նահանգներուն մէջ, Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի Եպիսկոպոսները կը վայելէին Արքեպիսկոպոսի կամ Պատրիարքի տիտղոսը : միւս երեքը՝ Եքսարքի :

Իրաւական այս կացութեան, որ կը բղխէր եկեղեցական Աւանդութենէն, երաշխաւոր դարձան Հռոմի Եպիսկոպոսները՝ իրենց սեփական գերազանցութեան առանձնաշնորհութեան զօրութեամբ : Բ. դարու վերջին տարիներէն առկին, 196ի առիթները, Զատիկի տօնակատարութեան բանավէճին առիթով, եկեղեցական Աւանդութիւնը՝ յատուկ տեղ կու տար Երուսաղէմի Եկեղեցւոյն, որ փոխադրուած էր Փիլիպպեան Կեսարիա : Նիկիոյ եօթներորդ կանոնը կու դար վաւերացնէ այս կարգադրութիւնը : Քաղկեդոնի Ժողովին մէջ, պատուոյ դերքը փոխուեցաւ իրաւասութեան՝ Պաղեստինի վրայ :

2. Կ. ՊՈԼՍՈՅ ԱԹՈՌԻՆ ԾԱԳՈՒՄԸ

381 թուականին, տիեզերական Բ. Ժողովին մէջ, երկրորդ եւ երրորդ կանոններով բնորոշուեցան Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի Պատրիարքութիւններուն, ինչպէս նաեւ երեք Եքսարքութիւններուն սահմանները : Հուսկ՝ նոյն Ժողովը պատուոյ դահերիցութիւն մը կու տար Բիւզանդիոնի : «Պատուոյ ճշմարիտ դահերիցութիւն մը ունի Կ. Պոլսոյ Եպիսկոպոսը,

1. HEFELÉ, Histoire des Conciles, Paris, 1907, I (1), էջ 560 :

Հռոմի Եպիսկոպոսէն ետք : այն պատճառով որ Կ. Պոլիս պիտի դառնայ Նոր Հռոմ» :

395ին, երբ Կայսրութիւնը երկուքի բաժնուեցաւ, Բիւզանդիոնի քաղաքական կարեւորութիւնը աւելի եւս սկսաւ աճիլ :

Դ. դարու վերջաւորութեան, Ս. Յովհանն Ոսկեբերան (398-404), «Ի դրծոյ» (de facto) կը վարէր որոշ իրաւասութիւն մը՝ Թրակիոյ, Ասիոյ եւ Պոնտոսի երեք Եքսարքութիւններուն վրայ :

Ատտիկոս է որ Թէոդոս Բ. կայսեր մէկ հրովարտակով իրաւունք ստացաւ որ երեք Եքսարքութիւնները չկարենան ընտրել Եպիսկոպոս մը, առանց Կ. Պոլսոյ Սինոդոսին համուքեան : Իսկ Անատոլի, Եպիսկոպոս Կ. Պոլսոյ, խաբէութեամբ ստացաւ, Քաղկեդոնի Ժողովին իններորդ եւ տասներորդ կանոններու զօրութեամբ, իրաւասութիւն՝ երեք Եքսարքութիւններուն վրայ : Լեւոն Ա. Պապը բողոքեց այս յափշտակումին դէմ² :

Որպէսզի Կ. Պոլսոյ Եպիսկոպոսը կարենար Պատրիարք դառնալ, իրեն ուրիշ բան չէր մնար, բայց եթէ ջնջել երեք Եքսարքութիւններու ինքնավարութիւնը, եւ ձուլել անոնց տիտղոսները՝ Արեւելքի եւ Կայսրութեան մայրաքաղաքի տիտղոսին մէջ : Ասոր փորձը կատարուեցաւ Քաղկեդոնի նշանաւոր 28րդ կանոնով, որ Կ. Պոլիս քաղաքին կը շնորհէր երկրորդ կարգը՝ Հռոմէն ետք, ինչպէս նաեւ իրաւունքը՝ երեք Եքսարքութիւններուն Մետրապոլիտները ձեռնադրելու, հուսկ նաեւ անոնց առանձնաշնորհութիւնները՝ նոնց հողամասերու Եպիսկոպոսներուն վրայ, ներառեալ անոնք, որ Կայսրութեան սահմաններէն անդին կը գտնուէին, բարբարոս երկիրներու մէջ :

Ահա՛ թէ տառաջիւրդէն ինչ կը տրամադրէր Քաղկեդոնի Ժողովին 28րդ կանոնը : «Իրաւամբ Հայրերը ճանչցան Հին Հռոմի Գահին առանձնաշնորհութիւնները, որովհետեւ այդ քաղաքը կայսեր բնակավայրն էր : Միեւնոյն նկատողութենէն չարժած, 150 Հայրապետները համադրօր առանձնաշնորհութիւններ ընծայեցին Նոր Հռոմի սուրբ

Գահին [աղնարկ՝ Կ. Պոլսոյ 381ի տիեզերական Ժողովին], համարելով արդարապէս որ կայսեր ու ծերակոյտին ներկայութեամբ համբաւ վայելող եւ կայսերական Հին Հռոմի հաւասար առանձնաշնորհութիւններ ունեցող քաղաքը պէտք է պատկուով բարձր նկատուի, եկեղեցական զօրծառնութիւններու մէջ, Հին Հռոմէն յետոյ՝ երկրորդ Աթոռը գրաւելով : Հետեւաբար՝ Պոնտոսի, Ասիոյ եւ Թրակիոյ թեմերուն Մետրապոլիտները, նմանապէս սոյն քեմբերում կապուած բարբարոս երկիրներու Եպիսկոպոսները [= Հայաստանի, Վրաստանի եւ Աղուանից] պիտի ձեռնադրուին Բիւզանդիոնի յիշեալ սուրբ Գահէն»³ : Ակնհերեւ է կանոնին ձգտումը՝ մայրաքաղաքին զուտ քաղաքական կարեւորութեան վրայ հիմնելու Աթոռին իրաւասական ծաւալը, զուրկ՝ եկեղեցական աւանդութեան մը տուեալներէն :

Այս կանոնը մերժուեցաւ Հռոմի Քահանայապետներէն՝ յարգելով Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի Աթոռներուն առանձնաշնորհութիւնները : Եւ ասիկա պիտի ըլլար նաեւ պայքարի գլխաւոր կէտերէն մէկը, դարերու ընթացքին, ընդ մէջ Հայոց Եկեղեցւոյն եւ Բիւզանդիոնի Աթոռին, ինչպէս պիտի տեսնենք :

Վերջապէս, Կ. Պոլիս յաջողեցաւ դերադոյն կամ բողոքի ատեանի իրաւասութիւնն ստանալ՝ այս հողամասերուն վրայ Եկեղեցւոյն եւ Բիւզանդիոնի Աթոռելի վրայ :

Արեւելեան այս բազմակի վարչակազմը ի զօրու պիտի մնայ դարերու ընթացքին, մինչեւ 1054 թուականը⁴ :

Յուստինիանոս կայսրն եղաւ (527-565) որ վերջին ձեւը տուաւ Պատրիարքութիւններու կազմակերպութեան : 123րդ «Նովել»-ին մէջ (546 թուականին) վաւերացուեցաւ հինգ Պատրիարքութիւններու զոյութիւնը, իրենց նախապատուութեան

2. TOURNEBIZE, Histoire politique et religieuse de l'Arménie, Paris, 1903, էջ 509 :

3. HEFELÉ, անդ, հտ. II (2), էջ 815-818 :

4. D. H. MAROT, Note sur la Pentarchie, «Irenikon», հտ. 32, էջ 436-437 :

կարգով. «Հռոմ, Կ. Պոլիս, Աղեքսանդրիա, Անտիոք եւ Երուսաղէմ»⁵. «Հռոմ քաղաքի Սրբազնագոյն Պապը առաջինն է բոլորին. իսկ նոր Հռոմի Գերերջանիկ Եպիսկոպոսը կը գրաւէ երկրորդ տեղը»⁶:

Հոսկ, է. դարէն սկսեալ, կը յառաջադրւի Կ. Պոլսոյ առաքելականութեան գիտակցութիւնը. շնորհիւ երեւակայութեան ճիշդի մը, կը կապեն զայն նախ Ս. Յովհաննէսի. յետոյ՝ Ս. Անդրէասի, որ Սկիւթացիներուն քարոզած էր:

Այսպէս կազմուեցան արեւելեան չորս Աթոռները, որոնց նախապատուութեան կարգը վերջնականապէս հաստատուեցաւ Կ. Պոլսոյ Դ. Ժողովին մէջ (863): Իսկ Ս. Սոփիայի Ժողովին մէջ (879), Պապին նուիրակները ընդունեցան՝ ի նպաստ փոփոխելու Արեւելքի կանոնական ինքնավարութիւնը. վարչաձեւ մը՝ որ դարերով ընդունուած էր Եկեղեցւոյ մէջ, բաժանումներէն առաջ, արեւելեան ըմբռնումին համաձայն:

Ֆիրենցէի Ժողովին մէջ, ճանչցուեցաւ հետեւեալ կարգը. «Նորոգելով կանոններու մէջ աւանդուած կարգը՝ Կ. Պոլիս, Աղեքսանդրիա, Անտիոք, Երուսաղէմ, Իւրաքանչիւրն իր առանձնաշնորհութիւններով եւ իրաւունքներով»⁷:

Այսպէս, Հնդապետական աստուածաբանութիւն մը կը կազմուի, որուն լաւագոյն մեկնաբաններն եղան Ս. Մաքսիմոս Խոստովանող, Տարասիոս, Նիկեիոր, Թէոփոր Ստուդիտ. իսկ Հռոմի մէջ, Նիկիոյ Պապին օրով, Անաստաս Գրապետը⁸:

3. Հնգապետութիւն

Հնդապետութեան այս գաղափարն է որ ըսել կու տայ, 2. տիեզերական Ժողովի ընթացքին (681), Կոստանդիանոս Դ.

կայսեր՝ թէ Ժողովական վճիռները պէտք են հաղորդուիլ Պատրիարքական հինգ Աթոռներուն:

Արեւելքի մէջ, պատկերամարտութեան պայքարներու ժամանակ, Հնդապետութեան դերը աւելի եւս կը զարգանայ: Թէոփոր Ստուդիտ կը պահանջէ որ վարդապետական վճիռները վերապահուին «Առաքելներու հինգ յաջորդներուն», և կը շեշտէ անոնց հաճութեան կարեւորութիւնը⁹, մանաւանդ Ժողովներու ընդունելութեան հարցին մէջ՝ ընդդէմ պատկերամարտներու¹⁰: 817ին, դիմեցին Պապին Բ. Պապին եւ միւս Պատրիարքներուն¹¹: Իր կողմէն, Պապը, յաջորդ Ս. Պետրոսի, առաջնակարգ դեր մը կը խաղար: Մաքսիմոս Խոստովանող շատ յստակ է այս կէտին շուրջ, ձայնակցելով Թէոփոր Ստուդիտի:

Պատրիարքները անմիջական իրաւասութիւն մը կը բանեցնեն Մետրապոլիտներուն վրայ, բողոքի դերադոյն առեանի իրաւասութիւն մը վերապահելով Հռոմի Աթոռին՝ Սարգիսի կանոնին զօրութեամբ, Բիւզանդական օրէնսդրութեան մէջ ներմուծուած, 692էն սկսեալ: Ինչ որ նախապէս լուր սովորութիւն մըն էր, կամ լաւ եւս՝ եկեղեցական աւանդութիւն մը, այսպէս հիմա օրէնքի կը վերածուի: Ընդհանրապէս էական կը նկատուի ներկայութիւնը կամ ներկայացուցչութիւնը հինգ Պատրիարքներուն՝ Տիեզերական Ժողովի մը համար:

Իդնատեան Ժողովը¹², Ը. տիեզերականը՝ ըստ լատին աւանդութեան (869-870), օրէնքներ կը հրատարակէ Հնդապետութեան մասին՝ շարք մը կանոններով. 21րդ կանոնին մէջ, կը թուարկէ զայն՝ Արեւելքի աւանդական կարգին համաձայն: Ազրիանոս Բ. Պապը, կայսեր ուղղած իր նամակին մէջ, կը շնորհաւորէ որ «Հայ-

giis omnibus et juribus eorum»).

8. ՆՈՅՆ, ամդ, էջ 438:

9. Թուղթ Բ. 124, PG 99, 1417c.

10. Ամդ, 63, 72:

11. Ամդ, 12, 13, 14, 15:

12. Իդնատիոս Պատրիարք՝ 847-858, 867-877:

րերու աւանդութիւնը եւ Եկեղեցւոյ օգտակար իրաւունքները հաստատուած ու վաւերացուած են՝ ապագային համար ընդ միշտ». եւ Հնդապետութեան գաղափարին հակառակ չէ¹³:

Պատրիարքները որակուած են իրր հինգ ճրագներ տիեզերքի, հինգ գլուխներ ու սիւններ Եկեղեցւոյ, հինգ զգայարաններ՝ եկեղեցական մարմնին, ուր Հռոմ՝ աչքի դեր կը կատարէ, ըստ Անաստաս Գրապետի. Հռոմ առաջին տեղը կը գրաւէ:

Փոքր Պատրիարքին առ Զաքարիա Հայոց կաթողիկոսը ուղղուած նամակին մէջ ալ, 862ին, ընդունուած է այս վարդապետութիւնը՝ իրր ընդհանուր համոզում Եկեղեցւոյ: Յետ յիշատակելու հինգ Աթոռները՝ Անտիոք, Աղեքսանդրիա, Հռոմ, Նոր-Հռոմ (Կ. Պոլիս) եւ Երուսաղէմ (տող 167-175), մինչ Քաղկեդոնի Ժողովին պատմականը կ'ընէ փոքր, ու կը ջատագովէ առորդաւորական բանաձեւին ուղղափառութիւնը, եւ յետ ըսելու թէ «ամենայն բարեպաշտութեամբ եւ ուղիղ հաւատով վարեցան տիեզերական Եկեղեցիքն. եւ որպէս դայեակ՝ տղայոց ի Գրիստոս կաթն ջամբեցին տիեզերաց, ի ձեռն լուսաւոր վարդապետացն զբողոքս խոսմն Աւետարանին, որպէս եւ բոլորեց տիեզերաց յայտնի է», այսպէս կը շարունակէ. «այժմ զիւրոք խոտորէին յուղիղ ճանապարհէն, յորս հանապազ գնալին. կամ զիւրոք հինգ Պատրիարքներն. հաւանքին ի մի հաւատ եւ ի մի խորհուրդ: Արդ, եթէ խոտորեալ էին ի ճշմարիտ հաւատոյն, մերժեալ լինէին յեկեղեցւոյն Աստուծոյ եւ հաւածեալ լինէին ի բողոքս տեղեացն, որպէս եւ աստուածատուր ի սրբայէլ անկաւ ի յիւր փառացն»¹⁴:

Այս աստուածաբանութիւնը անփոփոխ կը մնայ Արեւելքի մէջ, մինչեւ 1054:

13. D. H. MAROT, ամդ, էջ 434-440: Հմմտ. ծանօթ. 1, Անաստասի նախարարը՝ 869ի Ժողովի զորոգումը:

14. Թուղթ ՓՈՏՍՅ ՊԱՏՐԻԱՐԿԻ առ Զաքարիա Կաթողիկոս Հայոց Մեծաց (Հրտ. Հ. Ներսէս Աղիւնեան), «Հանդէս Ամսօրեայ» ԶԲ. (1968),

Նոյնիսկ վերջն ալ, Որթոդոքսներու մօտ, բացի քանի մը հեղինակներէ (օր. Պետրոս Անտիոքացի, Նեղոս Դոքսոպատիւ Արքիմանդրիտ, Թէոփոր Պալսամոն, Նեղոս Կարասիլաս, Յովհաննէս Կամատերաս Պատրիարք)¹⁵:

Կը թուի թէ աւանդական Հնդապետութիւնը ի պատուի էր նոյնիսկ Ժէ. դարուն, դուցէ մինչեւ ԺԸ. դար: Որթոդոքսներու շրջանակին մէջ, այս հարցը քննադատուած է գլխաւորաբար «անսխալականութիւններ»-ու հնգեակին սահմանափակումին համար, ԺԹ. դարուն, ինքնավար Եկեղեցիներու հիմնադիրներուն կողմէ¹⁶: Բայց արդէն վաղուց հակաձուլութեան նիւթ էր անիկա՝ Արեւելեան ալ Եկեղեցիներու կողմէ, բիւզանդական որթոդոքսութեան սահմաններէն անդին, մանաւանդ Հայաստանեայց Եկեղեցւոյ կողմէ, սկսեալ այն օրէն՝ երբ Եկեղեցական հաղորդակցութեան զօղը խզուեցաւ, Քաղկեդոնի Ժողովին յաջորդող դաւանական տարաձայնութիւններուն հետեւանքով:

Բ.

ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

ԵՒ ԻՐ ՍԿԶԲՆԱԿԱՆ ԴԻՐՔԸ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՆՈՒԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1. ՆԵՐԱՄԱԿԱՆ

Քրիտոնէութեան գոյութիւնը Մեծ Հայքի մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորչէն առաջ, մանաւանդ նուիրապետական Եկեղեցւոյ մը գոյութիւնը առ հասարակ մերժուած է արդի քննադատներէն:

Մեր նպատակը չէ ճառել այս հարցին շուրջ, որ առանձին ուսումնասիրութեան մը նիւթ կրնայ ըլլալ: Սակայն, հին վկա-

թ. 1-3, էջ 91, տող 441-446: տե՛ս նաեւ ամդ, Թ. 4-6, էջ 130, տող 610-612:

15. JUGIE, *Theologia Dogmatica Christianorum Orientalium*, IV, էջ 453-461: D. H. MAROT, ամդ, էջ 460:

16. D. H. MAROT, ամդ, էջ 441:

5. ՆՈՅՆ, ամդ, էջ 437:

6. 81րդ «ճովել», 545 թուականի:

7. D. H. MAROT, ամդ, էջ 442 («Renovatis insuper ordinem in canonibus traditum: Constantinopolim, Alexandriam, Anthio-cum, Jerusalem, salvis profecto privile-

յաբանութիւններու քանի մը հետքերը, որոնք աւանդութեամբ հասած են մեզի, խղճմտօրէն հաւաքուած ըլլալով Ե. դարու հայ ժամանակագիրներէն, եւ որոնք իրենց դրոշմը ձգած են նաեւ մեր ծէսին վրայ, մեզի համար պերճախօս փաստեր կը թուին ըլլալ, որոնք կը հաստատեն քրիստոնէութեան թափանցումը մեր երկրին մէջ, Ս. Գրիգոր Լուսաւորչէն առաջ:

Որոշ նշաններէ առաջնորդուած՝ պիտի միտէինք հաստատել նոյնիսկ դոյութիւնը նախալուսաւորչեան նուիրապետութեան մը, որ նսեմացած ըլլայ՝ հալածանքներու պատճառով: Այս ենթադրութիւնը կը հաստատուի բացի որոշ դաւադանացանկերէ կամ եպիսկոպոսներու անուններէ, նաեւ Աղաթանգեղոսի բաւական նշանակալից մէկ աղանդէն, ուր Ս. Ղեւոնդ՝ Կապադովկեան Կեսարիոյ Արքեպիսկոպոսը, գրելով Հայոց Տրդատ թագաւորին, Մեծ Հայքի առաքեալ Ս. Գրիգորի ձեռնադրութենէն ետք, հետեւեալ կերպով կ'արտայայտուի. «Եւ հաստատեալ կացցէ վկայութիւն ի մէջ երկոցունց կողմանցս, զի պարզեաւարաշխութիւն նորոգ քահանայապետութեանդ ձերոյդ նահանգիդ՝ առ ի մէջնջ, կացցէ անշարժ՝ յեկեղեցւոյս Կեսարու»¹⁷:

Նամակին այս հատուածը, որուն հարադատութիւնը ընդունուած է իբր խորք, աղանդիկելով քահանայապետութեան վերանորոգումի մը՝ Հայաստանի մէջ – անշուշտ Մեծ Հայքի մէջ – Կեսարիոյ Եկեղեցւոյն ձեռքով, կարծէք թէ կը յիշեցնէ նախադոյ քահանայապետութիւն մը, եպիսկոպոսութիւն մը, որ ահա կու գայ վերանորոգուիլ¹⁸:

Անտարակոյս, մեր ծանօթութիւնները այս հեռաւոր շրջանին նկատմամբ՝ շատ սեղմ են: Սակայն, եթէ քրիստոնէութիւնը դոյութիւն ունէր Հայաստանի մէջ, շատ հաւանաբար՝ Եգեսական քարոզութեան ճամբով եղած պէտք է ըլլայ:

Քրիստոնէութեան թափանցումը մը հարաւէն, Եգեսիոյ վրայով, շատ հաւանաւոր է թուի, մանաւանդ եթէ ուշ դար-

ձնէնք հայ վկայաբանութեան հետքերուն, որոնց դրոշմը, ըսինք, մնացած է մեր ծէսին եւ աւանդութեան մէջ: Գալով կադմակերպուած Նուիրապետութեան մը դոյութեան, կը տարածային կարծիքները, նոյնիսկ երբ կը հանդիպինք քանի մը եպիսկոպոսներու անուններուն:

Ամէն պարագայի, հայ եկեղեցական նուիրապետութիւնը, մեզմէ պատմականօրէն ընդունուած, կը սկսի Ս. Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբ: Հաւանաւոր է, որ հայրենի հաշիւներու համաձայն, Հայաստանի այս մեծ Առաքեալը եպիսկոպոս ձեռնադրուած պէտք է ըլլայ 314ին, Կապադովկեան Կեսարիոյ մէջ, Ղեւոնդ Արքեպիսկոպոսէն:

Ուրեմն, Հայոց Աթոռը կամ Կաթողիկոսութիւնը պաշտօնապէս իր ծագումը կ'առնէ ինքնին Ս. Գրիգոր Լուսաւորչէն, Դ. դարու ճիշտ սկիզբը: Անիկա կը ստեղծուէր՝ երբ Պատրիարքական Աթոռները կազմաւորումի շրջան մը կ'ապրէին, Արեւելի մէջ:

Ընդունելով հանդերձ այսպիսի Կաթողիկոսական աստիճանի մը դոյութիւնը Արեւելեան – Ասորի Եկեղեցւոյ դաւաններուն մէջ, մենք դիտմամբ ներկայ ուսումնասիրութեան մէջ պիտի սահմանափակուինք Հայ կաթողիկոսութեան հարցին շուրջ, եւ յատկապէս՝ Հայ կաթողիկոսական Աթոռին ինքնավարութեան մասին:

2. ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԾԱԳՈՒՄԸ

Ուրեմն, մեր պատմական ստոյգ ծանօթութիւնները՝ հայ Նուիրապետութեան ծագումի մասին, կը սկսին Ս. Գրիգոր Լուսաւորչէն, որմէ սկիզբ առած է Հայ Կաթողիկոսութիւնը և կը դոյատուէ մինչեւ մեր օրերը, պատմութեան այնքան զանազանեալ ելեւէջներու ընդմէջէն:

Ի՞նչպէս եղած է անոր ծագումը:

17. ԱԳԱՐԱՆԳԵՂՈՍ, Պատմութիւն, հրատ. Գ. Տէր-Մկրտչեան և Ստ. Կանայեանց, Տիբլիս, 1909, ճԺՁ, Թ. 826, էջ 431:

18. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ, Ս. Ղ. 1920, էջ 202-204:

Պատմական տուեալներու համաձայն, այս նորածնունդ նուիրապետութիւնը ծագած է եւ կապուած Կապադովկեան Կեսարիոյ Եգեսարքութեան Մետրապոլիտան կամ Արքեպիսկոպոսական Աթոռին:

Եկեղեցին, կամ լաւ եւս, Հայ նորակաթմ Նուիրապետութիւնը նկատուած էր իբր երկարում մը Կեսարիոյ քարոզչութեան՝ Հայաստանի մէջ, եւ Ս. Գրիգոր՝ անոր ամէնէն աւելի աղանդաւոր առաքեալներէն մէկը:

Նուիրապետական կապերը, եկեղեցական սովորութիւններու համաձայն, այն ժամանակ ի յայտ կու գային զլիաւորաբար Կաթողիկոսին ձեռնադրութեամբ, զոր կը կատարէր Կեսարիոյ Եգեսարք՝ սովորութիւն՝ որ խղճմտօրէն յարգուեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորչի անմիջական յաջորդներէն, ամբողջ Դ. դարու երեք քառորդի ընթացքին:

Կաթողիկոսութեան թեկնածուն, ընտրուած հայ եպիսկոպոսներու համաժողովէն, եւ վաւերացուած թագաւորին ժողովուն հաճութեամբ, յանձնարարական նամակներով կը ներկայանար, եւ ըստ սովորութեան՝ նախարարական եւ շքախումբի մը ընկերակցութեամբ, Կեսարիոյ Եգեսարքին, որպէսզի ձեռնադրուէր եւ ստանար կաթողիկոսական իշխանութիւն:

Այսպէս ձեռնադրուեցան, Կեսարիոյ մէջ, Յուսիկ (342-348), Փառէն (348), Սահակ (349-353), Մեծն Ներսէս (353-359 եւ 367-373), գուցէ նաեւ Յուսիկ Բ. (373-377). այսինքն՝ հինգ կաթողիկոս, եթէ յիշուի Ս. Մեծն Բարսեղ, 372ին դրած իր նամակին մէջ, ուղղուած Արեւմտեան Հայրերուն²⁰, իրմէ ձեռնադրուած եպիսկոպոսներուն մէջ կը յիշատակէ Իժմապետ մը, քննադատներէն նոյնացուած:

19. ՓԱԽՍՏՈՍ ԲԻԻՋԱՆԿԱՅԻ, Պատմութիւն Հայոց, Վենետիկ, Ս. Ղ. 1933, Գ. Ժ, ԺԳ, ԺԷ. Դ. Գ:

20. Հ. ԲԱՐՍԵՂ ՍԱՐԳԻՍԵԱՆ, Ագաթանգեղոս և իւր բազմադարեան գաղտնիքը, Վենետիկ, Ս. Ղ. 1890, էջ 184-194:

Յուսիկ Բ. ի հետ, որ Կաթողիկոս նշանակուեցաւ Պապ Թագաւորէն, Ս. Ներսէսի սպանութենէն յետոյ (373):

Հ. Արիշան, հիմնուելով Վարդան Վարդապետի պատմութեան մէկ վկայութեան վրայ, կը հաստատէ նոյնը նաեւ Ս. Արիստակէսի համար, որ Ս. Գրիգորի անմիջական յաջորդն է, ըսելով թէ անիկա ալ պէտք է Կեսարիա դադած ըլլայ 332ին, իր հօր հրաժարումէն յետոյ²¹: Բայց ասիկա ուշ դարու վկայութիւն մըն է: Միւս կողմէ, Արիստակէս արդէն իսկ ձեռնադրուած ըլլալով՝ պէտք չունէր Կեսարիա երթալ:

Նոյնը պէտք է հաստատել նաեւ իր եղբոր եւ յաջորդին՝ Վրթանէսի նկատմամբ՝ երրորդ կաթողիկոս՝ Ս. Գրիգորէն սկսեալ՝ որու մասին աղբիւրները ուղղակի բան մը չեն աւանդեր. բայց երբ կը յիշատակեն իր յաջորդին՝ Յուսիկ Ա. ձեռնադրութիւնը, Կեսարիոյ Արքեպիսկոպոսէն, հետեւեալ նկատողութիւնը կը յարեն. «Ըստ սովորութեան օրինակին»։ Ինչ որ խորհիլ կու տայ թէ Ս. Վրթանէս ալ պէտք է Կեսարիա դադած ըլլայ, եթէ նախապէս ձեռնադրուած չէր²²:

3. ՀԱՅՈՑ ԱԹՈՐ ԵՒ ԿԵՍԱՐԻՈՑ ԵԿԱՐԳՈՒԹԻՒՆԸ

Նուիրապետական այս զօղը, որ դոյաւցաւ երկու Աթոռներուն միջեւ, միայն այս դէպքերով չէ որ կը յայտնուի, այլ նաեւ վաւերաթուղթով մը, այս յարաբերութիւններու ծագման շրջանէն հասած, զոր կարելի է իրաւական հետքը նկատել համաձայնութեան մը կամ դաշինքի մը, երկու Աթոռներուն միջեւ, մէկ կողմէն Կեսարիան ունենալով, միւս կողմէն՝ հայ Արքունիքն ու Նուիրապետութիւնը:

21. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, անդ, էջ 200-202: ՎԱՐԴԱՆ ՎՐԹ. ՊԱՍՏՄԵՆ, Հաւաքումն պատմութեան Հայոց, Վենետիկ, Ս. Ղ. 1862, էջ 41, կը գրէ. «Յերեսներու միջ լուսաւորչութեան իւրոյ սուրբն Գրիգոր զԱրիստակէս առաքէ ի Կեսարիա՝ ձեռնադրել...»:

22. ՓԱԽՍ. ԲԻԻՋ. անդ, Գ. Ժ, էջ 40:

Այս վկայությունը նամակ մըն է, Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնագրի՝ Կեսարիոյ Ղեւոնդ Արքեպիսկոպոսէն գրուած, ի պատասխան այն գրութեան՝ զոր զըրկած էր Հայոց Տրդատ թագաւորը, Ս. Գրիգորի աշխարհական աջ բազուկը՝ Մեծ Հայքի քարոզութեան գործին մէջ²³:

Եթէ Տրդատ թագաւորէն Ղեւոնդ Արքեպիսկոպոսին ուղղուած նամակին հարազատութիւնը տարակուսելի կը թուի ըլլալ, դէժ ներկայ ձեւին մէջ, կը դրէ Հ. Բարսեղ Սարգիսեան, նոյնպէս չէ, սակայն, Ղեւոնդի գրածը առ Տրդատ. և բանասէր Հայրը կ'ապացուցանէ իր վարկածը՝ արդի քննադատներուն վերապահումներուն եւ առարկութիւններուն դէմ²⁴:

Սոյն նամակին մէջ, մեզ յատկապէս հետաքրքրող հատուածը հետեւեալն է. «... եւ հաստատեալ կացցէ վկայութիւն ի մէջ երկոցունց կողմանցս — այսինքն, մէկ կողմէն՝ Կեսարիոյ, եւ միւս կողմէն՝ Հայոց Աթոռին եւ արքունիքին միջեւ — զի պարգեւաբաշխութիւնն նորոգ քահանայապետութեանը ձեռնարկը, առ ի մէջ, կացցէ անշարժ՝ յեկեղեցւոյս Կեսարիոյ»²⁵:

Յայտնի է նուիրապետական կարգի մը վերահաստատումի ակնարկը, որ տեղի կ'ունենար՝ Կեսարիոյ Երեսօրէն ստանալով ձեռնադրութիւնը:

23. ԱԳԱՅԱՆԳԵՂՈՍ, անդ, ձԺԲ, Թ. 797-801. ձԺԶ, Թ. 820-826:

24. Հ. Բ. ՍԱՐԳԻՍԵԱՆ, անդ, էջ 172-173, 182-183: Վերոյիշեալ վաւերացութիւնը հարազատութեան մասին տարակուսներ ունին ԳԱԹՐԱՅԱՆ, STILTING, եւ GUTSCHMID, ZDMG, XXXI, էջ 56-57: Կոտայիտ կը մերժէ, միւսները աւելի ուշ ժամանակի կ'որակեն՝ է. կամ Բ. դարու:

Ընդհանրապէս, Ալիշան ու Սարգիսեան կ'ընդունին. վերջինս կ'աշխատի հերքել հակառակորդներու կարծիքները. տե՛ս անդ, էջ 169-199: Թուրքացի հակամէտ է ընդունելու (Hist. էջ 428, Թ. 2):

Նկատել կու տանք որ աւելի զօրուար է նման նամակ մը դասուարել է. կամ Բ. դարերուն, այսինքն՝ այն չըջանին մէջ, երբ Հայոց Աթոռին ինքնավարութեան ձգտումները

Թողունք որ այս իրաւունքին ընթացիկ գործադրութիւնը՝ Կեսարիոյ Աթոռին կողմէ, ուրիշ բան չէր՝ բայց եթէ ընդունուած օրէնքի մը արտայայտութիւնը, որ աւելի ուշ վաւերացուեցաւ նաեւ Տիեզերական Բ. Ժողովին մէջ (Կ. Պոլիս, 381): Այս Ժողովը կը տրամադրէր, ի մէջ այլոց, երկրորդ կանոնով՝ «Ecclesias Dei in barbaricis gentibus constitutas gubernari convenit juxta consuetudinem, quae est a Patribus observata»²⁶: Ասով, յիշեալ Ժողովը ուրիշ բան չէր ընէր՝ բայց եթէ պահպանել ընթացիկ օրէնքը:

Հ. Վարդան Հայունի չ'արտայայտուիր վերոյիշեալ նամակին հարազատութեան մասին, սակայն կը հաստատէ որ այսպիսի վաւերացութիւն մը ներկայութիւնը՝ հայ Ազաթանդեղոսին մօտ (Ե. դարու խմբագրութիւն), կը փաստէ թէ այդ դարուն արդէն կը հաւատային սոյն դաշինքին գոյութեան²⁷:

Իսկապէս ալ, որպէսզի Կեսարիան կարենար գործադրել այս իրաւունքը Մեծ Հայքի վրայ, որ կանգնած էր հռոմէական սահմաններէն անդին, պէտք չ'ունէր միթէ համաձայնութեան մը, դէժ առ նւազն՝ յայտարարութեան մը ձեւին տակ հաղորդուած հայ նորադարձ Արքունիքին, որ մեծ շուքով Կեսարիոյ Մետրապոլիտ՝ Ղեւոնդ Արքեպիսկոպոսին զըրկուեցաւ:

Իրենց գաղաթնակէտին հասած էին:

Հաւանական է որ նամակը, իր հայերէն թարգմանութեան ներկայ ձեւին մէջ, պատկանի Ազաթանդեղոսի, նոյնինքն հեղինակին: Բայց ժխտելու համար վաւերացութիւնն բնագրէ՝ որմէ քաղուած է, պէտք են փաստեր: Դէպքերն ինքնին՝ որոնք պատահեցան, երբ Հայոց արքունիքը արդիւնք այս համաձայնագրին գործադրութիւնը, ցոյց կու տան որ պաշտօնական յանձնարարութիւն մը գոյութիւն ունէր:

25. ԱԳԱՅԱՆ, անդ, ձԺԶ, Թ. 826, էջ 431, տող 1-4:

26. Cod. Can. Or. — Fonti, Serie Ia, t. IX, n. 750. — Joannou P.-P., Fonti, fasc. IX, t. I, Roma 1962, էջ 29:

27. Հ. ՎԱՐԴԱՆ ՀԱՅՈՒՆԻ, Կարեւոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութեան, Վեհափառ, Ս. Ղ. 1927, էջ 187-188:

կած էր Գրիգորը, Եպիսկոպոս ձեռնադրելու համար²⁸: Իսկ եթէ, միւս կողմէ, ենթադրենք նաեւ կանխագոյն Նուիրապետութեան մը թափանցումը, նոյնիսկ նախնական ձեւի մը տակ, Երեսօրէն ճամբով, Հայաստանի հարաւային կողմը, նման համաձայնութիւն մը կ'ընէր անհրաժեշտութիւն մը պիտի նկատուէր Կեսարիոյ համար:

Ահա՛ պատճառները, որոնք մեզ կը մըղեն արժէք ընծայելու վերոյիշեալ վաւերացութիւն: Նոյնը կու դան հաստատել դէպքերն ալ, որոնք մեզ պիտի զբաղեցնեն յաջորդաբար, Աթոռի ինքնավարութեան առաջին փորձերէն իսկ, որոնց ձեռնարկեցին Հայոց թագաւորները:

4. ՀԱՅՈՑ ԻՐԱՆԱԿԱՆ ԴԻՐՔԸ՝

ԿԵՍԱՐԻՈՅ ՀԱՆԴԵՊ

Արդ, անցնինք համառօտակի ճշտելու թէ կաթողիկոսական այս աստիճանը ինչ դերք ունէր սկզբնապէս՝ նուիրապետական դեմքի վրայ:

Իրեն վերադրուած տիտղոսներէն դատելով՝ ոչինչ կրնանք եզրակացնել, անոնց դանազանութեան պատճառով: Մանաւանդ որ հայ առաջին ժամանակագիրները մեզի հասած չեն իրենց Դ. դարու հարազատ բնագիրներուն մէջ, յունարէն կամ ասորերէն, այլ՝ թարգմանութեամբ, կամ Ե. դարու հայ գրիչներու խմբագրութեամբ:

Ամենահին հայերէն բնագիրներուն մէջ, Ս. Գրիգոր Լուսավորչի եւ իր յաջորդներուն վերադրուած տիտղոսներու շատ զանազանեալ աստիճանաւորում մը կայ. ահա ամէնէն ցայտունները. Եպիսկոպոս, Արքեպիսկոպոս, յաճախ նաեւ իր հայա-ցած ձեւով՝ Եպիսկոպոսապետ, երբեմն Մեծ Արքեպիսկոպոս, եւ մանաւանդ Կաթողիկոս Հայոց կամ Մեծի Հայոց: Այս-

պէս, Ազաթանդեղոս Ս. Գրիգորի կ'ընծայէ, մինչ ան իր երկիրը կը վերադառնայ Կեսարիայէն, ձեռնադրուած, հետեւեալ տիտղոսները. «Հովիւ», «Բիշիւ», «Վարդապետ», «Տեսուչ», «Եպիսկոպոս», «Արքեպիսկոպոս», «Եպիսկոպոսապետ», «Քահանայապետ», «Մեծ քահանայապետ» եւ հուսկ «Կաթողիկոս»: Այս տիտղոսներէն մաս մը աւելի յաճախակի կը տրուի, ինչպէս «Կաթողիկոս» կամ «Եպիսկոպոսապետ» կամ «Մեծ Քահանայապետ» եւ «Կաթողիկոս Հայոց» կամ «Հայոց Մեծաց»²⁹: Փաւստոս Բիւզանդ Ազաթանդեղոսէն աւելի ճշգրիտ չէ տիտղոսներու գործածութեան մէջ. բայց արդէն իսկ կը նախընտրէ «Եպիսկոպոսապետ» կամ «Մեծ Քահանայապետ». Հայոց Աթոռը կը կոչէ «Աթոռ Հայրապետական»:

Ս. Գրիգորիս, Լուսավորչի թողը, որ Հայաստանէն զրկուեցաւ իբր Եպիսկոպոս Աղուաններու, Դ. դարու առաջին կէսին իսկ կոչուած է «Կաթողիկոս կողմանցն Վրաց եւ Աղուանից»: Կեսարիոյ Մետրապոլիտն ալ, ինչպէս Եւսեբիոս, Ս. Բարսեղ եւն... երբեմն կոչուած են «Կաթողիկոս Կաթողիկոսաց»³⁰:

Կորին, մանաւանդ Ս. Սահակի համար կը գործածէ «Կաթողիկոս» տիտղոսը. բայց երբեմն սարգապէս «Եպիսկոպոս Հայոց» կը կոչէ. ընդհանրապէս, Կ. Պոլսոյ Եպիսկոպոսին՝ Ատտիկոսի կը վերապահէ «Հայրապետ» հայաձեւ տիտղոսը, առանց տառադրման յունական «Պատրիարք» եղբ³¹:

Ղազար Փարպեցի, իր ժամանակակիցներուն համար, որոնք Ս. Սահակի յաջորդներն էին՝ Յովսէփ Ա., Գիւտ եւն... կը նախընտրէ «Կաթողիկոս» տիտղոսը: Մովսէս Խորենացին, ընդհանրապէս, «Եպիսկոպոսապետ» տիտղոսը կը գործածէ ըլլա՛յ Հայաստանի, ըլլա՛յ նաեւ

28. Հ. ՊՈՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ, Ս. Գրիգոր Լուսավորչի ձեռնագրութեան բնականը եւ պարագանքը, Վեհափառ, Ս. Ղ. 1960, էջ 113-135:

29. ԱԳԱՅԱՆ, անդ, էջ 413-416, 420-421, 424, 427, 455, 459-461, 464:

30. ՓԱՒՍՏ. ԲԻՒԶ. անդ, էջ 19, 25, 28, 30-33, 35, 37, 38, 40-43, 44-51, 55-56:

31. ԿՈՐԻՆ. ԹԱՐԳՄԱՆԻՉ, Պատմութիւն վարուց եւ մահուան Ս. Մետրապոլ վարդապետի, Վեհափառ, Ս. Ղ. 1894, էջ 27. Ժ, 10:

հելլեն ձգտումներ ունեին եւ խորապէս հակամէտ էին ասորականութեան, իրրեւ ընդդիմադիր տարր Ս. Գրիգորի պարթեւ ընտանիքին:

Եւ բախումը չուշացաւ: Ս. Ներսէս դահլէնէց եղաւ քմահաճոյարար Արշակ թագաւորէն, 359 թ. ատենները, ու փոխանակուեցաւ Չունակ անունով քահանայէ մը, շողորթ պալատական մը: Ասիկա եղաւ պալարի առաջին քայլը՝ ընդմէջ արքունիքին եւ Հայ Եկեղեցւոյ պաշտօնական Նուիրապետութեան: Թագաւորին հրամանը՝ Չունակ քահանան եպիսկոպոս ձեռնադրելու՝ բացէ ի բաց մերժուեցաւ Հայ եպիսկոպոսական մարմնէն, բացի Հայաստանի հարաւակողմի Աղձնիք եւ Կորճեայք նահանգներու եպիսկոպոսներէն⁴⁸: Հայ եպիսկոպոսական մարմինը կու դար փաստել իր հաւատարմութիւնը՝ եկեղեցական կանոններուն եւ Կեսարիոյ հետ Նուիրապետական հաղորդակցութեան⁴⁹: Եւ այսպէս՝ վիճ մը կը փորուէր ընդմէջ արքունիքին եւ Եկեղեցւոյն:

Քաղաքական իշխանութեան կողմէ հոգեւոր իշխանութեան հանդէպ ոտնձուութեան մը առաջին արարքն եղաւ այս շարժումը: Սակայն, Չունակ չճանչցուեցաւ Հայոց Եպիսկոպոսական մարմնէն, եւ Արշակ ստիպուեցաւ հաշտուիլ Ս. Ներսէսի հետ, որ 8 տարի ետք՝ շուրջ 367 թին, վերադարձաւ իր Աթոռը:

Արշակ թագաւորի եղբրական մահէն ետք, Պարսկաստանի Անյուշ բերդին մէջ, դահ բարձրացաւ իր որդին՝ Պապ: Ասիկա ալ գտնուեցաւ Ներսէս Կաթողիկոսի հետ, եւ վերջնականապէս ազատելու հա-

մար անկէ, թունաւորեց զինքը, 373 թին⁵⁰: Ներսէսի տեղ Աթոռ հրաւիրեց Յուսիկ կամ Շահակ անունով մէկը, միշտ Աղբիւնոսի զերգաստանէն, ազատ ընելով՝ ձեռնադրութեան համար Կեսարիա երթալու պարտականութենէն:

Փ. Բիւզանդ կը յիշատակէ Կեսարիոյ Աթոռին հակադրեցութիւնը, ուր Մեծն Բարսեղ նստած էր: Ասիկա, կ'ըսէ Բիւզանդ, Սիւնհոգ մը զուժարեց, որուն մասնակցող ժողովական Հայրերը բողոքի խիստ նամակ մը գրեցին Հայաստանի թագաւորին: Եւ ինչ որ աւելի ծանր է, անոնք «Լուծին զիշխանութիւնն Կաթողիկոսութեանն. զի որ լիցին Հայրապետ Հայոց, նա գրանն արքունի իշխեսցէ ըզհայն օրհնել. եւ մի՛ իշխեսցէ ձեռնադրել զեպիսկոպոսն Հայոց, որպէս սովորութիւն էր ի բնէ»: Նոյն ժամանակաշրջանը, շարունակելով իր պամութիւնը, կ'աւելցընէ. «Եւ յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն Հայոց զեպիսկոպոսն ձեռնադրել. այլ որ լինէին եպիսկոպոսք ամենայն դաւառաց զաւառաց Հայոց (անշուշտ՝ թափուր թեմերու) եւ կողմանց կողմանց (անտարակոյս՝ կ'ակնարկէ Վրաստանի եւ Աղուաններուն), այնուհետեւ յայնմհետէ որ միանգամ լինէին եպիսկոպոսք սահմանացն Հայոց, երթալին ի քաղաքն Կեսարացոց, եւ անդ լինէին եպիսկոպոսք: Վասնզի յայնմ հետէ բարձաւ իշխանութիւնն յերկրէն Հայոց, այնուհետեւ ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել (ձեռնադրուիլ). բայց որ լինէր աւագ եպիսկոպոսացն, ի վերոյ միայն նստէր, եւ հաց օրհնէր թագաւորացն»⁵¹: Ս. Բարսեղ

48. ՓԱԽՍ. ԲԻԻՁ. անդ, Գ. ԺԵ. էջ 132:

49. Նիկիոյ ժողովի 6րդ կանոնը հետեւեալն է. «Illud autem generaliter clarum est, quod si quis praeter sententiam metropolitani fuerit factus episcopus, hunc magna Synodus definivit episcopum existere non debere. Sin autem communis cunctorum decreto rationabili et secundum ecclesiasticam regulam comprobato duo aut tres propter contentiones proprias, contradicunt, obtineat sententia plurimorum». JOANNOU P.-P., Fonti,

fasc. IX, t. I, 1, Roma, 1962, էջ 29:

50. ՄՈՎԱ. ԽՈՐ անդ, Գ. ԼԸ, էջ 514-515: GARITTE, անդ, «Liste Grecque», § 7, էջ 417. Իսկ Ներսէսի թունաւորման մասին՝ թագաւորէն, տե՛ս էջ 74: TOURNEBIZE, անդ, էջ 488:

51. ՓԱԽՍ. ԲԻԻՁ. անդ, Ե. ԺԹ, էջ 230-231: GARITTE, անդ, Liste Grecque, § 11, 12, էջ 403, ձայնակից է Փաւստ. Բիւզանդի՝ թէ այս եպիսկոպոսները լոկ ամուսնական կաթողիկոսներ էին, իրենց արդիւնաւ ըլլալով, Ներսէսի մահէն ետք, եպիսկոպոս ձեռնադրել:

է որ թափուր աթոռներուն եպիսկոպոս պիտի ձեռնադրէր. եւ նոյնիսկ կը պատահէր որ թեմ մը վէճի առարկայ դառնար երկու մրցակիցներու կողմէ⁵²:

Չունակի յաջորդները, գրեթէ բոլորն ալ Աղբիւնոսի ազգատոհմէն, արդէն եպիսկոպոսներ էին. բայց չճանչցուեցան երկրին եպիսկոպոսական մարմնէն, ոչ ալ Կեսարիայէն, բացի գուցէ Յուսիկ Բ. Կաթողիկոսէն: Ահա թէ ինչո՞ւ Բիւզանդ զանոնք կը կոչէ Աւագ, Գլուխ կամ Իշխան եպիսկոպոսաց, եւ ոչ թէ Կաթողիկոս, քանի որ Հայոց Աթոռը գրաւած էին թագաւորին հրամանով միայն⁵³:

Եզնիկի ընծայուած Գաւազանացանկին մէջ, Ներսէսի յաջորդներուն շարքին՝ յիշատակելով Յուսիկ Բ. կամ Շահակ Կաթողիկոսը, հետեւեալ գիտողութիւնը կը կատարուի. «Սա եկաց կաթողիկոս» իբր ինքնազուլիս⁵⁴:

Մովսէս Խորենացի անցողակի կ'ըսէ թէ Պապ թագաւոր Շահակն անուանեց Ս. Ներսէսի տեղ «առանց մեծի եպիսկոպոսին Կեսարու»⁵⁵:

Այս թափուր վիճակը, արժանահաւատ հեղինակներու համաձայն, շուրջ 17 տարի տեւած պէտք է ըլլայ, մինչեւ Ս. Սահակի դահակալութիւնը (387/8): Հայ Եկեղեցւոյ պատմութիւնը չորս տիտղոսակերներ կը յիշատակէ. Յուսիկ Բ. (373-377), Չաւէն (378-381), Շահակ 381-383), Ասպուրակէս (383-387), որոնք Աւագ կամ Գլուխ եպիսկոպոսաց պաշտօնը վարած են⁵⁶:

Հ. Ալիշան, հիմնուելով այն պարագային վրայ՝ թէ անոնց անունները ներկայ են զաւազանացանկերու մէջ, կը հաստատէ թէ բոլորն ալ իբր ասպորինի Կաթողի-

կոսներ դատուած չեն, բացի Չունակէն, եւ աւելի ուշ՝ նաեւ Սուրմակի պարագայէն, ինչպէս նաեւ՝ թէ բոլորն ալ անարժան անձեր չեն եղած. անոնք որոշ յարգանք մը վայելած են իրենց ժամանակիցներէն: Սակայն, հակառակ այս բոլորին, իրենց յաջորդութիւնը հակահանդիման կատուած է: Յուսիկ կամ Շահակ, առաջինի եկեղեցական, ըստ Հ. Ալիշանի, յաջորդարար պէտք է օրինաւորաւ ըլլայ իր վիճակը՝ Կեսարիոյ հանդէպ: 364 թին, Անտիոքի ժողովին Հայրերուն կողմէ Յուսիկին Կայսեր զրկուած նամակին ներքեւ՝ կը կարծուի թէ իր ստորագրութիւնն ալ գտնուի, նոյնացած Ἰσακὸς անունին, Խորովի եւ Ներսէսի կից. նըմանապէս, Ս. Բարսեղի կողմէ գրուած նամակին մէջ (372/3 թին) Արեւմտեան Հայրերուն եւ Դամասոս Պապին (366-384)⁵⁷: Հաւանաբար այս Յուսիկն է որ Ս. Բարսեղին զրկուած է Եւսեբիոսին, որ Սամոստի եպիսկոպոսն էր:

Եթէ ներելի չէ այս դէպքերը որակել իրրեւ հերձուած, որովհետեւ Հայոց եպիսկոպոսական մարմինը, իր ընդհանրականութեան մէջ, հաւատարիմ մնաց կանոններուն, սակայն կարելի՞ է արդեօք եղբրակացնել թէ Հայոց Կաթողիկոսական Աթոռը ասով դարձաւ ինքնազուլիս կամ ինքնավար:

Չենք կարծեր: Որքան ատեն որ Հայոց եպիսկոպոսական մարմինն կողմէ մերժուած մնաց այս նախաձեռնութիւնը, ասիկա ուրիշ բան չէ՝ բայց եթէ մահափորձ մը, կատարուած աշխարհիկ բազուկէն, ընդդէմ Եկեղեցւոյ ազատութեան: Թուրնըպիզ զայն կը կոչէ գտնութեան սկզբնաւորութիւն մը⁵⁸: Մենք այդպէս չենք կարծեր: Յաջորդ դէպքերը, մանա-

52. Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ, անդ, էջ 201-208: PG, XXXII, Նամականի թիւ 99, 129-122: TOURNEBIZE, անդ, էջ 488-491:

53. ՓԱԽՍ. ԲԻԻՁ. անդ, էջ 230, 263-264, 267-268, 274: GARITTE, անդ, §§ 11-12, էջ 403:

54. Եզնիկ ԵՐԷՅ, Նկարագիր Կարգաց, Հանդէս Ամսօրեայ ՄԱ. 1937, Թ. 11-12, էջ 518, (հրատ. Հ. Ն. Ալիշան):

55. ՄՈՎԱ. ԽՈՐ. անդ, Գ. ԼԹ.:

56. GARITTE, անդ, Liste grecque, էջ 402-403: TOURNEBIZE, անդ, էջ 488-497:

57. SOCRATE, Hist. Eccl. III, 25; PG. 67, 454. «Ἰσακὸς Ἀρμενίας Μεγαλῆς» Հիմա. PG. 32, 477: MANSI, S. Conc. Coll. III, 513: Հ. Ս. ԿՈՅՆՆ, Հայոց Եկեղեցին, Պէտք, 1961, էջ 116-117:

58. TOURNEBIZE, անդ, էջ 497-498:

ձիւշտ է՝ թէ այս հատուածը չկայ յոյն բնագրին մէջ, զոր հրատարակած է Ֆր. Նիկ. Ֆինկ: Սակայն, ասիկա գոյութիւն ունի ո՛չ միայն հայ թարգմանութեան մէջ, այլ նաեւ Ս. Ներսէս Լամբրոնացին, ԺԲ. դարուն, գրելով Անտիոքի Յուսիկ ճգնաւորին, բացայայտ կերպով կ'ակնարկէ սոյն հատուածին, ու կը մէջբերէ զայն այսպէս. «Եւ ի տաքտիկոնն, յորում կարգ եպիսկոպոսացն սահմանի, գրեալ է որ Հայոց Կաթողիկոսն պատուեցաւ՝ վասն սրբոյն Գրիգորի, որպէս եւ կըզգին Կիւրոսի՝ վասն առաքելոյն Բառնաբայ, եւ յիւրեանցն եպիսկոպոսաց առնուն Արքեպիսկոպոսք զձեռնադրութիւն: Եւ զայս ի ձեր գրոց ունիմք հաստատել, եւ ոչ ի Հայոց»⁸⁰:

3. ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿԷՆ ԱՆՄԻՋԱՊԷՍ ԵՏԲ

Ս. Սահակի մահուան յաջորդող դէպքերը աւելի եւս կու գան լուսաբանել մեր ըսածները: Ինչ որ ուշագրաւ է, այն է՝ որ Սահակի անմիջական երկու յաջորդներն ալ լոկ Տեղապահ եղած են. Սուրբ Մեսրոպ († 17 Փետր. 440) վեց ամիս պաշտօնավարելէ ետք, իսկ Սուրբ Յովսէփ Ա. (440-454 Յուլիս 25), մարտիրոսացած Պարսկաստանի մէջ: Այս վերջինիս համար, Մովսէս Խորենացի սեղմօրէն կը գրէ. «Իսկ զԱթոռ եպիսկոպոսապետութեանն ետեղապահութեամբ յաջորդեաց հրամանաւ երանելոյն Մեսրոպայ՝

նորին աշակերտ Յովսէփ քահանայ»⁸¹: Ինչո՞ւ համար երկու յաջորդութիւններ՝ առժամեայ նկարագրով:

Հ. Վ. Հացունիի համաձայն՝ արդեւելքը կու գար Կ. Պոլսոյ կողմէ⁸²: Մենք բոլորովին հակառակը կը կարծենք: Արդեւելքը կու գար դուրսէն, Պարսից Արքունիքէն, միջնորդութեամբ Բզնունեաց եպիսկոպոս՝ Սուրմակ հակա-կաթողիկոսի:

«Պատմութիւն յաղագս հայկական իրաց» գործէն քաղուած հատուածի մը համաձայն, Կեսարիոյ կողմէ պարտագրուած արդեւելքն ետք, որ տեղի ունեցաւ իբր բողոք Ս. Սահակի գահընկէցութեան, Պարսկաստանի թաղաւորը՝ ի մէջ այլոց՝ հրամայած էր հայ Նուիրապետներուն, որ իրենք ձեռնադրէին իրենց եպիսկոպոսները, առանց Կեսարիա երթալու⁸³: Արդարեւ, արքայական այս հրահանգին վրայ, Սուրմակ հակա-կաթողիկոս կը շարունակէ եպիսկոպոսներ ձեռնադրել «ի հրամանէ Յաղիւրտի», ինչպէս կը հաստատէ Յովհաննէս Կաթողիկոս պատմաբան եւս⁸⁴:

Անտարակոյս, արքայական այսպիսի հրամանէ մը, որ ինք իր մէջ հակա-կանոնական է, կրնային օգտուել Սուրմակի կողմնակից թեկնածուները միայն:

Սակայն, հայ եպիսկոպոսներու պաշտօնական զանգուածը անիոյթ չէր մնար կանոնաւորելու այս հարցը 444ի Շահապիւլանի ժողովին մէջ, 16րդ կանոնով, որ այս բանաձեւն ունի. «Որ զլիւսաւոր եպիս-

թեան: Որովհետեւ եթէ յունարէն բնագրին մէջ չըլլար, Ս. Ներսէս Լամբրոնացի պիտի չհամարձակէր ակնարկել յոյն հեղինակին, Էսեկով. «Եւ զայս ի ձեր գրոց ունիմք հաստատել, եւ ոչ ի Հայոց»: Ս. Ներսէս Լամբրոնացի՝ Նեղոս Դոքսոպատիոի գրութիւնը կ'անուանէ «Տափտիկոն» (Dyptique). տե՛ս նաեւ Հ. Ն. Այնիսեան, Ներսէս Լամբրոնացի... Վիեննա, 1956, էջ 293:

81. ՄՈՎՍ. ԽՈՐ. ամդ, Գ. 45. էջ 612:

82. Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ, ամդ, էջ 230-234:

83. GARITTE, *Narratio*, ամդ, §§ 31-33, 65-66:

84. GARITTE, ամդ, § 31-33, էջ 151: ՅՈՎՀ. ԿԹՎ. ամդ, էջ 76:

կոպոսն աշխարհին, առանց նորա կամաց՝ եպիսկոպոսք մի՛ լիցի»⁸⁵:

Եթէ Հայ Եկեղեցին կանոնականօրէն զրկուած էր եպիսկոպոս ձեռնադրելու իշխանութենէն՝ Կեսարիոյ կամ Կ. Պոլսոյ մէկ արդեւելքով, Սուրբ Սահակի մահէն ետք, ան պիտի չհամարձակէր այլեւս բանաձեւել այսպիսի կանոն մը: Ուրեմն, արդեւելք չէր գար եկեղեցական բարձրագոյն իշխանութենէ մը, այլ՝ աւելի Տիգրանէն ու անոր արբանեակներէն:

Ուրիշ մանրամասնութիւն մըն ալ, որ կ'արժէ նկատել, վերոյիշեալ ժողովին կիրարկած եղբն է, «Գլխաւոր եպիսկոպոս», փոխանակ Կաթողիկոսի:

Պատճառը. նախ՝ որովհետեւ Հայ Եկեղեցւոյ համար բուն հալածանքի այդ շրջանին, հալածանք՝ թէ՛ Սասանեան շրջանին, հալածանք՝ եւ թէ՛ ասորասէր արքունիքին կողմէ եւ թէ՛ ասորասէր խմբակին կողմէ, Կաթողիկոսութեան խմբակին վէճի առարկայ էր՝ երկու հոստիւճանը վէճի առարկայ էր՝ երկու հոստիւճանը կողմնակիցներուն միջեւ, այսանալան մարմնին, որ հաւատարիմ մնանք էր իրենց վարդապետներէն՝ Սահագան ու Մեսրոպէն ընդունած հրահանգներուն, եւ ասորամէտ կուսակցութեան՝ որ Արքունիքին եւ անհաւատ տիրապետողներուն ենթարկուած էր: Հուսկ՝ նաեւ այն պատճառով, որ Յովսէփ Ա. այն եւս պարզ քահանայ մըն էր: Ձեռնատեղ պարզ քահանայ մըն էր: Զեռնադրուեցաւ ժողովէն յետոյ, երբ յաջորդեցան ստանալ թաղաւորին հաճութիւնը զեցան ստանալ թաղաւորին հաճութիւնը, որովհետեւ արտօնութիւնը, Արքունիք առաքելով, պատուիրակութեան մը միջոցով, զոր կազմակերպեց Սուրմակի մահէն ետք՝ Օհան անունով մէկը, որ անշուշտ շատ դժուարութիւններու բախած ըլլալու է հոն՝ յաջորդելու համար⁸⁶:

«Պատմութիւն յաղագս հայկական իրաց»ի հեղինակը՝ Փոքր Թէոդոսի 37րդ տարին կը զետեղէ, որ է 444/45 Ապրիլ 30, Շահապիւլանի ժողովին թուականը, կեղեցւոյ պաշտօնական ձեռնարկութիւնը եպիսկոպոսներ ու կաթողիկոս ձեռնադրելու:

Տիրող պայմաններուն ճշգրիտ դադար կազմելու համար, յիշելու է որ վրամ Ե. արքայի հրամանով՝ Ս. Սահակ, 427/28 թուականին, գահընկէց եղած էր. Սուրմակ գրաւած էր Հայոց Աթոռը. ասոր յաջորդեցին՝ ժամանակ մը՝ ուրիշ ասորի եկեղեցականներ, Բրքիշոյ ու Շմուէլ: Սուրմակ դարձեալ գրաւեց Հայոց Աթոռը՝ յետ մահուան Սուրբ Սահակի ու Մեսրոպի, մինչեւ Շահապիւլանի ժողովը, մինչեւ իր մահուան թուականը:

Դժիւհմ շրջան մը եղաւ, նուիրապետական տեսակետով, Հայ Աթոռին վիճակը: Հայ եպիսկոպոսներու թիւը նուազած էր Ս. Սահակի գահազրկութենէն ի վեր, ձեռնադրութեանց պակասէն: Ասորին Շմուէլ չէր թոյլատրեր Ս. Սահակին՝ որ թափուր Աթոռները լեցնէր իր ընտրութեամբ. անշուշտ Շմուէլէն ներկայացուածներն ալ ինք չէր ընդուներ: Ուստի, կը գրէ «Պատմութիւն յաղագս հայկական իրաց»ի հեղինակը՝ թէ Հայոց պետերը յանգնեցան համաձայնութեան մը գալ՝ անկախութեան մը շուրջ, ու անոնց «Գլխաւորները եպիսկոպոսներ ձեռնադրեցին» Թէոդոսի 37րդ տարին, որ կը զուգորդուի Շահապիւլանի ժողովին ու Սուրմակի մահուան հետ⁸⁷:

Իրօք ալ Շահապիւլանի ժողովին մասնակցող եպիսկոպոսներուն թիւը շատ ցած է: Անուններ՝ որոնք հոս իբր վարդապետ կամ երէց կը ներկայանան, վեց տարի յետոյ, 450ին՝ Արտաշատի ժողովին մէջ եպիսկոպոս կը ներկայանան. այսպէս Մելիտ՝ եպս. Մանազկերտի, Երեմիա՝ եպս. Ապահունեաց, Եղիշէ՝ եպս. Ամատունեաց, եւ հուսկ Յովսէփ՝ որ երէց էր ու տեղապահ, Արտաշատի ժողովին կը ներկայանայ իբր «Եպիսկոպոս Արարատայ»: Հաւանօրէն Շահապիւլանի

80. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Խորհրդածութիւն Սրբազան Պատարագի, Երուսաղէմ, 1842, յաւելում՝ էջ 24:

Նկատելով որ Ֆինկ յունարէն բնագրին համար ուրիշ բան չէ ըրած՝ բայց եթէ վերատուել GUSTAVUS PARTHEY-ի հրատարակածը, Hiéroclis Synecdemus et Notitiae graecae episcopatum/ի մէջ. NILI DOXOPATRI Notitia Patriarchatum et locorum nomina immutata (Berlin, 1866), շատ հաւանական է որ քննական նոր հրատարակութիւն մը՝ նաեւ յունարէն բնագրին՝ մեղի ասոյ վերոյիշեալ հատուածը, զոր ներկայացուցինք՝ հետեւելով հայերէն թարգմանու-

85. ՄԵԼԻՒԲ-ԹԱՆԳԵԱՆ, Հայոց եկեղեցական իրաւունքը, Երուս, 1903, էջ 336, 352:

86. ԿՈՐԻՆ, ամդ, էջ 46-47: Հ. Ս. ԿՈՐԵԱՆ, ամդ, էջ 149:

87. GARITTE, ամդ, § 31-33, էջ 30, 99-102: ՄՈՎՍ. ԽՈՐ. ամդ, Գ. 44-45, էջ 603-4:

տակ, որ Հայոց Եկեղեցին ու Նուիրապետութիւնը՝ դանդաղելով երկսայրի սուրբի մը դիմաց — կա՛մ Եկեղեցւոյ ինքնին բընաջնջումը՝ Հայաստանէն, կա՛մ դըժուարին պահպանումը նուիրապետական հաղորդակցութեան՝ Արեւմուտքի հետ (Կեսարիոյ կամ Բիւզանդիոնի) — նախընտրեց այս վերջինին թուլացումը, միշտ հաւատարիմ մնալով դաւանական միութեան, ու հաւատքի հարցերուն մէջ՝ եկեղեցական հաղորդակցութեան պահանջներուն, որուն ծրագիրը արդէն իսկ ուրուագծած էր Ս. Սահակ: Անոր դրած սկզբունքները հասունցան անոր մահէն ետք. եւ զործադրուեցան՝ նախ խոհեմութեամբ՝ երկու Տեղապահներու շրջանին, հուսկ՝ Շահապիւմանի ժողովէն սկսեալ՝ աւելի եւս վճռականօրէն, մինչեւ որ 484ին՝ Յովհան Մանգակունի Կաթողիկոս քաղեց պտուղները, վերանորոգ ազատութեան մէջ:

Հայ Եկեղեցւոյ ինքնավարութիւնը կամ ինքնադիւսութիւնը, ուրեմն, շատ յամբարէն վերածուեցաւ սովորութեամբ իրաւունքի. եւ ամենեւին հեռու՝ անկախութեան ձգտող եւ անջատողական հոգիէ, որ բոլորովին անծանօթ էր մարտիրոս եւ խոստովանող այդ Հայրապետներուն, որոնք նախանձախնդիր էին միշտ Եկեղեցւոյ միութեան, այդ ինքնավարութիւնը տրամաբանական մէկ հետեւանքն եղաւ քաղաքական անցուղարձերուն⁹⁵:

Չափազանց կարեւոր եղրակացութիւն մըն է ասիկա, կարենալու համար ուղիղ ըմբռնել եւ զնահատել պատմական այս յեղաշրջումը դէպի ինքնավարութիւն, եւ կ'արժէ ընդգծել:

Ասիկա առաջին հանգրուանն է Հայոց Աթոռին ինքնավարութեան կամ՝ ինչպէս սովոր են կոչել հին մատենագիրները՝ ինքնադիւսութեան:

Ե.

ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ Զ-Է. ԴԱՐԵՐՈՒ
ՔՐԻՍՏՈՍԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՃԵՐՈՒ
ՇՐՋԱՆԷՆ ԱՍԿԻՆ

1. ԴԵՊԻ ԿՂԶԻԱՅԵԱԼ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Յովհան Մանգակունիէն ետք, Ե. դարու վերջաւորութեան, Բարդէն Ա. Կաթողիկոսի ժամանակ, Հայաստան կը հասնէին քաղկեդոնեան վէճերը, եւ նախ՝ Ջենոն կայսեր «Հենոտիկոն»ի միջոցով. վէճեր, որոնք պիտի զբաղեցնէին Հայերը դարերով, ու պիտի պղտորէին իրենց եկեղեցական յարաբերութիւնները Կ. Պոլսոյ Աթոռին եւ Բիւզանդիոնի Արքունիքին հետ:

Հայ Նուիրապետութեան սովորաբար ժխտական կեցութեամբ՝ Քաղկեդոնի ժողովին հանդէպ, պիտի յանդիս հուսկ՝ Հայ Եկեղեցւոյ ինքնավարութեան նոր ուղղութիւն մը դրոշմելու, բոլորովին տարբեր անկէ՝ զոր դժած էր Ս. Սահակ, եւ որուն հետեւած էին անոր աշակերտներն ու անմիջական յաջորդները:

Այս նոր ուղղութիւնը ի յայտ եկաւ հայ-բիւզանդական բանակցութիւններու ընթացքին, որոնց առիթը տրուեցաւ առաջին անգամ՝ Դուինի ապստամբութեան առեւ, որ տեղի ունեցաւ 572ին, Վարդան Բ. Մամիկոնեանի առաջնորդութեամբ, ընդդէմ Պարսիկ կառավարիչ՝ Սուրէն Մարզպանին: Ապստամբները որպէսզի կարենային խուսափել Արքայից Արքային վրէժի զորութենէն, ապաւինեցան Բիւզանդիոնի Յոյներու մօտ: Յաջորդեց Բիւզանդիոնի արշաւանքը Պարսկաստանի վրայ եւ դրաւ ուժը պարսկահայ արեւելեան բաղձաթիւ դաւառներու, Մօրիկ եւ Հերակլ կայսրներու ժամանակ:

Կրօնական վէճերու շրջան մը սկսաւ այնուհետեւ ընդմէջ Հայոց եւ Կ. Պոլսոյ որթողութեան Եկեղեցւոյն: Յովհաննէս Գաբրիէան Կաթողիկոսը, որ Բիւզանդիոն ապաւինած էր՝ Եպիսկոպոսներու խմբա-

կով մը, հաղորդակցութեան մէջ մտաւ քաղկեդոնական Յոյներու հետ: Ասիկա կը հանդիպէր շուրջ 572ին: Իր հակառակորդները ամբաստանեցին զինք իբր յուսադաւան: Իր յաջորդը Մովսէս Բ. մերժեց Մօրիկի հրահրել՝ միութեան հետ յակցութիւններու, պատասխանելով թէ չէր կրնար անցնիլ Ազատ դեմք՝ խմբեալ հացով հաղորդուելու համար Յոյներու հետ⁹⁶:

Մովսէս Բ. Կաթողիկոսի մահէն ետք՝ երեք տարի թափուր մնաց Հայոց Գահը, զոր Տեղապահութեամբ վարեց Վրթապետ, մինչեւ Արքայամ Ա. Կաթողիկոսի մահը: Երկուքն ալ հակաքաղկեդոնական հոսանքին մաս կը կադմէին:

Հայ քաղկեդոնական խմբակն ալ զօրաւոր էր, իրեն նեցուկ ունենալով Բիւզանդիոնը, որ արդէն իսկ զբաւած էր պարսկական կամ արեւելեան Հայաստանի մեծ կահայ կամ արեւելեան Հայերու պարամասը: Քաղկեդոնական Հայերու պարամասը թէպէտ Եպիսկոպոս Թէոդօր (Կարին, այժմ՝ Էրզրում). աւսուարչոյ (Կարին, այժմ՝ Էրզրում). ասիկա շատ ազդեցիկ եկեղեցական մըն էր, որ չտատամեցաւ յոյնիսկ երկուքի անոր չտատամեցաւ նուիրապետութիւնը եւ Եւջատել Հայոց Նուիրապետութիւնը եւ Եպիսկոպոս, Քահանայ, Սարկաւազ, Կէսարկաւազ, Ընթերցող եւ Փսաղք. այսք ամենայն միաբանեալ ապա կարեն ձեռնադրել զՀայրապետն, եւ Հայրապետն՝ զամենեւեան: Արդ, եթէ ողջմըտութեամբ հաւատայք — կը շարունակեն Յոյները — խոստովան լերուք՝ եթէ ո՛վ է Պատրիարքն ձեր. զի չորք միայն կացին ի վերայ երկրի, Աղեքսանդրիոյ՝ Մարկոսի Աթոռն, Անտիօքայ՝ Մատթէոսին, Հռովմայ՝ Դուկասուն, եւ Եփեսոսի՝ Յովհաննուն, ըստ չորեքանկիւն տիեզերաց, ըստ քառավտակ գետոցն Աղինականի, ըստ չորից աւետարանչացն...», ու կ'եղրափակեն. «Արդ, մեք ամենեցուն հնազանդիմք, հնազանդեցարուք եւ Դուք

Այս խռովայոյց շրջանին է որ բանակցութիւններ կազմակերպուեցան Բիւզանդիոնի եւ Հայոց զոյգ Եկեղեցիներու միջեւ, Քաղկեդոնի ժողովին եւ այլ Նուիրապետական հարցերու շուրջ: Ժողովներ, բէն երեք տեղի ունեցան Կ. Պոլսոյ մէջ, 572ին, ներկայութեամբ Յովհաննէս Գաբրիէան Կաթողիկոսի. միւսները՝ Հայաստանի մէջ, գլխաւորաբար թէոդոսուպոսանի մէջ, Կայսերական պահակազօրի մայրաքաղաքը, Եզրի, Ներսէս Գ. Շինողի եւ Սահակ Գ. Կաթողիկոսներու զահակալութեան շրջանին, Է. դարու առաջին կէսի ընթացքին:

Այս բանակցութիւններուն մէջէն՝ մեր

նիւթին առնչութեամբ մեզ հետաքրքրողն է յատկապէս նուիրապետական վէճերու գլուխը, որուն կորիզը հաղորդութեան մեղի Աղուաններու պատմիչ՝ Մովսէս Կաղանկատուացիի ձեռքով, Թ. դարու վերջաւորութեան: Այդ տեղեկութիւնները պատմիչը ինքն ալ, իր կարգին, քաղած է Մաքենոցի հռչակաւոր մենաստանի վանահօր՝ Սողոմոն Առաջնորդի գրութենէն. ասիկա արդարեւ մեծ հեղինակութեան տէր անձ մը եղած է, որուն զործունէութիւնը տեղի է ունեցած 701-746 տարիներուն. հետեւաբար, ոչ շատ հեռու՝ յիշատակուած դէպքերէն:

Վերոյիշեալ պատմիչին համաձայն, ինչ որ ինք կը հաղորդէ մեզի Սողոմոն Առաջնորդի անունով, քրիստոսաբանական վէճերու ընթացքին՝ Յոյն իմաստունները նեղը դրած են Հայերը, նուիրապետական հարցերու գլուխին միտմամբ. «... կարգաւորեաց Աստուած դեկեղեցի ինն դասուք — կ'առարկէին Յոյները — որպէս ի վեր անդր երկնայինքն՝ յոյնպէս զահակաւեցան եւ ի ներքին խորանիս: Պատրիարք՝ որ է Հայրապետ, եւ Արքեպիսկոպոս՝ որ կոչի Եպիսկոպոսապետ եւ Կաթողիկոս, Մետրապոլիտ, եւ Եպիսկոպոս, Քահանայ, Սարկաւազ, Կէսարկաւազ, Ընթերցող եւ Փսաղք. այսք ամենայն միաբանեալ ապա կարեն ձեռնադրել զՀայրապետն, եւ Հայրապետն՝ զամենեւեան: Արդ, եթէ ողջմըտութեամբ հաւատայք — կը շարունակեն Յոյները — խոստովան լերուք՝ եթէ ո՛վ է Պատրիարքն ձեր. զի չորք միայն կացին ի վերայ երկրի, Աղեքսանդրիոյ՝ Մարկոսի Աթոռն, Անտիօքայ՝ Մատթէոսին, Հռովմայ՝ Դուկասուն, եւ Եփեսոսի՝ Յովհաննուն, ըստ չորեքանկիւն տիեզերաց, ըստ քառավտակ գետոցն Աղինականի, ըստ չորից աւետարանչացն...», ու կ'եղրափակեն. «Արդ, մեք ամենեցուն հնազանդիմք, հնազանդեցարուք եւ Դուք

95. Հ. Բ. ՍԱՐԳՍԻՍԵԱՆ, անդ, էջ 195-203: Հ. Վ. ՀԱՅՈՒՆԻ, անդ: Հ. Պ. ՀԱՄԵԼԵԱՆ, Արտաշատի ժողովքը... անդ. հմմտ. նաեւ Narratio § 32-33:

96. GARITTE, Narratio, §§ 77-83, p. 37, §§ 93-108, p. 39-41:

Նուիրապետներուն նախընտրած տիտղոսն ըլլար «Կաթողիկոս»ը, որ բուն սկզբնական տիտղոսն էր եւ իբր այդ՝ ամէնէն հարազատը:

3. ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՓՈՐՁԵՐ Ը-Ժ ԴԱՐԵՐՈՒՆ

Նկատելի է որ է. դարու բանակցութիւններուն յաջորդեցին հաշտութեան ուրիշ փորձեր, Ը. եւ Թ. դարերուն, Հայերու եւ Յոյներու միջեւ, հաւատքի միութեան հարցով:

Գերմանոս Ա. Պատրիարքը (715-730), գրելով 725ին, Հայոց ուղարկութիւնը կը հրաւիրէր դաւանական միութեան կարեւորութեան վրայ: Նմանապէս Փոտ, 862ին գրելով Զաքարիա Ա. Կաթողիկոսին, իսկ 879-889 թուականներուն՝ Աշոտ իշխանին¹⁰⁹:

Սակայն, նուիրապետական կապի հարցըն ալ, միշտ ենթադրելով եկեղեցական որոշ կախումնաւորում մը, հայ-կեսարեան հին յարաբերութիւններու ոճով, չի թուիր անտեսուած ըլլալ Բիւզանդիոնէն, այս բանակցութիւններու ընթացքին: Այսպէս Նիկիոյ Ա. Պատրիարք, Միստիք կոչուած (901-907, 911-925), Աշոտ Բ. Բագրատունիին ուղղած իր նամակին մէջ՝ կը թելադրէր Կ. Պոլիս առաքել Հայոց Աթոռին կաթողիկոսական ապագայ թեկնածուն, իրազօրեւոր համար ոչ միայն հաւատքի միութիւնը, Գաղկեդոնի ժողովին քրիստոսաբանական բանաձեւին շուրջ, այլ նաեւ Կաթողիկոսական ձեռնադրութիւն ընդունելու Կ. Պոլսոյ Պատրիարքէն¹¹⁰: Կը թուի որ նախաձեռնութիւնը ծագած ըլլայ նոյնինքն թաղաւորէն, աւելի եւս ամբողջութեամբ համար բարեկամական կապերը՝ իր թաղաւորութեան եւ Բիւզանդիոնի միջեւ:

Հակառակ այս կամ այն կողմի ճիշդութեան, Հայոց կեցուածքը սակայն՝ սովորաբար վերապահ եղաւ: Հասկնալի է. նախ անով՝ որ քաղաքական կացութիւնը, Ս. Սահակի դարէն սկսեալ, գրեթէ փոփոխութիւն չէր կրած: Յետոյ հոգեբանական կողմն ալ կար. Թէոդոս Ա.էն

ի վեր՝ Հայերը շատ անգամ յուսախար մնացած էին բիւզանդական կայսրներէն: Իսկ զուտ կրօնական հայեցակէտով, Հայոց եկեղեցին նկատած էր որ Կ. Պոլսոյ Պատրիարքներու կողմէ կատարուած հրաւերները՝ վերահաստատելու եկեղեցական հաղորդակցութիւնը՝ շատ անգամ զերծ չէին ոչ միայն հին ձեւով նուիրապետական կապեր ստեղծելու պայմաններէն, կամ ծիսական սովորութիւններ պարտադրելու ձգտումներէն, այլ նաեւ ենթարկուած էին Կայսրներու քաղաքական նպատակներուն: Ահա թէ ինչո՞ւ միահամուռ մերժեցին, նախընտրելով իրենց ինքնավարութիւնը՝ ամէն բանէ առաջ:

Միւս կողմէ, նկատելու է որ Հայերը միայն չէին՝ Արեւելքի քրիստոնեաներուն մէջ՝ որ այսպիսի կեցուածք մը որդեգրեցին ընդդէմ Բիւզանդիոնի: Ասորիքն ու Եգիպտոս կանխած էին զինք:

4. ԿԱՅՍՐՆԵՐՈՒ ՄԻՋԱՄՏՈՒԹԻՒՆԸ

Թող ներուի մեղի ակնարկել հուսկ, իրրեւ նմոյշ, որոշ կայսրներու տղեղ վարուելակերպին՝ զոր ցոյց տուին անոնք Հայոց Կաթողիկոսական Աթոռին հանդէպ. պատմութեան այս կարգի դէպքերէն վերջինը միայն յիշատակենք:

Ճիշտ կէսն ենք ԺԱ. դարուն, այն չըրջանին՝ երբ Կ. Պոլսոյ Աթոռը կը գծաւէր Հռոմի Աթոռին հետ, Միքայէլ Կերուլարիոս Պատրիարքի ժամանակ: Հայ իշխանները, սարսափած ասիական հրոսակներու անդուլ արշաւանքներէն, մէջն առնելով նաեւ Բագրատունեաց թաղաւորական տունը, մէկը միւսին ետեւէն, Կայսեր կը յանձնէին իրենց նախնիքներու

109. V. GRUMEL, Les Regestes des Actes du Patriarchat de CP, v. I, fasc. II, n. 326, p. 1-2; n. 473, p. 84-85; n. 515, p. 103; n. 516, p. 104-5: Հ. Ս. ԿՈՒԵԱՆ, անդ, էջ 272, 275-281:

110. V. GRUMEL, անդ, Թ. 717, էջ 197-99. այս նամակին թուականը պէտք է դնել 924/5 թ. տարեթիւները: Հմմտ. MAI, Spicilegium, X, 417-419: Հ. Ս. ԿՈՒԵԱՆ, անդ, էջ 299:

հոգերը, փոխան չնչին աւատի մը, որ կը տրուէր ընդհանրապէս Հայաստանի առեւտրակողմը, փոքր Ասիոյ մէջ, միակ բեւտակողմը, փոքր Ասիոյ մէջ, միակ այն պայմանով որ Հայկական արեւելեան սահմանները պաշտպանուէին Բիւզանդիոնէն՝ ասիական արշաւանքներուն դէմ: Այսպէս, Արծրունի իշխաններէն ետք, Բագրատունի տոհմի թաղաւորութիւնն ալ կը խաւարէր, յետ Յոյներուն յանձնաւ մայրաքաղաք Անին (1045): Հայկական այս հոգերուն քաղաքականօրէն Բիւզանդիոնի միացումը, շուտով պատրուակ դարձաւ Կոստանդին Թ. Մոնոմախոսի դարձաւ Կոստանդին Թ. Մոնոմախոսի (1042-1055), որ Կ. Պոլսոյ Պատրիարքը (1042-1055), որ Կ. Պոլսոյ Պատրիարքը թեան իրաւասութիւնը տարածել փորձէր հայկական այս հոգերուն վրայ, նոյնիսկ չնշելով կաթողիկոսութիւնը: Նենգութեամբ Կ. Պոլիս հրաւիրուեցաւ օրուան Կաթողիկոսը՝ Պետրոս Ա. Գետադարձ (1019-1058), որ սակայն Բիւզանդիոն (1019-1058), որ սակայն Բիւզանդիոն մեկնելէ առաջ, կասկածելով, իրեն իբր ապագայ յաջորդ ձեռնադրեց իր եղբոր՝ որդին՝ Սաշին Բ.:

Պետրոս Ա. արգելափակուեցաւ Կ. Պոլսոյ մէջ, շուրջ երեք տարի (1048-1051). հուսկ՝ թէեւ արտօնութիւն ստացաւ վերադառնալու իր երկիրը, սակայն թոյլ թաղաւորութեան իր երկիրը, արեւելեան Հայաստան, ուր կը գտնուէր իր Աթոռը, այլ միայն հաստատուիլ Սեբաստիա:

Կոստանդին Ժ. Դուկասի դահ բարձրանալուն (25 Դեկտեմբեր 1059) Պետրոս Ա. Գետադարձ արդէն իսկ մեռած էր: Կայսրը, չափազանց արծաթասէր, երկու Եկեղեցիներու միութիւնը իրազօրեւոր կեղեցիկութեամբ Բիւզանդիոն հրաւիրեց Սաշին Բ. Կաթողիկոսը, եւ անոր արգելեց կատարել իր հովուական պաշտօնը: Անդին, հայ պատմագիրներու հաղորդածին համաձայն, մէկ կողմէն՝ Կաթողիկոսին հօտին բռնութեամբ կը պարտադրէր ընդունիլ Գաղկեդոնեան բանաձեւը, միւս կողմէն՝ իր ոստիկաններով խուզարկել կու տար Սեբաստիա կամ արեւելեան Հայաստան, այն տեղերը՝ ուր կը համարէր գտնել կաթողիկոսական Աթոռին գանձերը:

Գահընկէց Գաղիկ արքան եւ Արծրունի իշխաններէն Ատոմ եւ Արուստէ, իրենց միջամտութիւններով Կայսեր մօտ, հուսկ շահեցան Սաշին Բ. Կաթողիկոսի ազատութիւնը, սակայն այն յանձնառութեամբ՝ որ չէր թար Հայաստան, իր Աթոռը, եւ ոչ իսկ Սեբաստիա. թոյլատրութեամբ լիկ հաստատուիլ Թաւրուր վանքը:

Սաշին Բ. հաղիւ ազատած իր աքսորէն, քիչ ետք մեռաւ, 1064ին: Իր յաջորդին ընտրութիւնը բրտօրէն արգիլուեցաւ Կայսրէն: Շատ ցաւալի տարիներ եղան Հայոց եկեղեցւոյն համար, մինչեւ այն ատեն անուր դէպքեր պատահեցան, նոյն իսկ անհաւատներու տիրապետութեան օրով չկատարուած եղելութիւններ: Անգամ մը եւս ստիպուեցան միջամտել հայ իշխանները, որոնք գրեթէ ամէն ինչ յանձնած էին Բիւզանդիոնի: Այս անգամ Կարսի արքայիկն եղաւ՝ Գաղիկ Արասեան, եւ իր դուստրը՝ Մարիամ, որոնք համարձակեցան միջամտել Կոստանդին Ժ. Դուկասի մօտ՝ փոխարէն տալով Կարս քաղաքը, արտօնութիւնը ստանալու համար կաթողիկոսական նոր ընտրութեան մը:

Վերջապէս, 1065ին, ընտրուեցաւ Գրիգոր Պահլաւունի իշխանին որդին՝ Վահրամ, որ կոչուեցաւ Գրիգոր Բ. Վկայասէր: Ընտրութիւնը տեղի ունեցաւ Ծամբնդաւի մէջ, զոր իբր աւատ ստացած էր Գաղիկ Արասեան արքայիկը¹¹¹:

Հոս կ'աւարտի Հայոց Աթոռին ինքնավարութեան երկրորդ հանգրուանը:

5. Բ. ԵԱՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Յաւարտ ինքնավարութեան ձգտող յեղաշրջուն դէպքերու այս երկրորդ հան-

111. Հ. Ս. ԶԱՄԵԱՆ, անդ, էջ 943, 968-972: Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, Ս. Ղ. 1873, էջ 22-29: ՀԱՅԿ ՊԵՐՈՒՄՅԱՆ, Հայոց Կաթողիկոսական Աթոռի բարձուր ժ. դարու կէսին, «Հանդէս Ամսօրեայ», ԶԱ (1967), Թ. 4-6, էջ 145-149. Թ. 7-9, էջ 327-346:

ծնած բաժանումներէն զատ, որոնց պատ-
ճառով՝ Աղեքսանդրիոյ եւ Անտիոքի Ա-
թոռներն ալ վաղուց երկճիւղուած էին,
իրենց ցեղաբանական ու մշակութային
գերաւորումներուն համաձայն, Ղպտի
եւ Ասորի Աթոռներու՝ Բիւզանդակա-
նին դէմ. երբ վրայ կը հասնէր նաեւ
Կ. Պոլսոյ Աթոռին եկեղեցական անջա-
տումը Հռոմէն, նախկին Հնգապետու-
թիւնը կը կորսնցնէր անխուսափելիօրէն
իր հին ու աւանդական իմաստը:

Աւելի ուշ, արեւելեան Կայսրութեան
կործանումով եւ Կ. Պոլսոյ գրաւումով
Թուրքերէն, վերջին հարուածը կը կրէր
Բիւզանդիոնի Աթոռին միասնականու-
թիւնն ալ, մեծ դուռ մը բանալով ազգա-
յին եկեղեցիներու եւ Աթոռներու կազ-
մաւորման, մինչ հետզհետէ նոր Պետու-
թիւններ կու գային ձեւանալ սլաւ աշ-
խարհին մէջ:

113. Պատմաբանական այս արժէքաւոր ուսումնա-
սիրութիւնը նիւթ եղած է՝ աւելի ամփոփ
ձեւով՝ բանախօսութեան մը, զոր Հեղինակը
ներկայացուցած է Ֆրանսերէն, հրաւէրով Ե-
կեղեցապատմական Համաժողովի մը, կազմա-
կերպուած Հռոմի Արեւելագիտական Հաստա-
տութեան Արեւելեան աստուածաբանութեան
Համալսարանի վարչութեան կողմէ (Հռոմ,
26-30 Դեկտեմբեր, 1967), քննութեան առար-
կայ ունենալով «Արեւելի Պատրիարքութիւն-
ները՝ առաջին հազարամեակին»:

Ամատուելի եպիսկոպոսի այս բանախօսու-
թիւնը մեծ հետաքրքրութիւն ստեղծած է
յաւարտ ներկայացումին՝ միջամտած են
Lacko եւ Ortiz de Urbina պատմագէտ աս-
տուածաբանները, խնդրելով կարգ մը լու-
սարանութիւններ՝ Հայոց Աթոռի ինքնավա-
րութեան ծագումին, ինչպէս նաեւ «Կաթողի-

Արեւելի Պատրիարքական հին Աթոռ-
ներուն այս կերպարանաւորութեան շըր-
ջանին էր, ուրեմն, որ Լուսաւորչի Աթո-
ռը կը վերահաստատէր իր եկեղեցական
հաղորդակցութեան կապերը՝ ուղղակի
կերպով՝ Հռոմի Աթոռին հետ, Հնգապե-
տութեան միակ անդամին՝ որ անշարժ կը
մնար, եւ որ կ'անձնաւորէր եւս իր մէջ
Առաքելապետին առանձնաշնորհումները:

Բայց այս գլուխը, ծայր աստիճան
բարդ, ինչպէս նաեւ այն՝ որ կրնայ յայտ-
նարանել դէպքերուն պատճառները, ո-
րոնց հետեւանքով՝ Հայոց Աթոռին եկե-
ղեցական հաղորդակցութեան այս նոր
կապը չունեցաւ իր բաղձալի շարունակու-
թիւնը, բայց եթէ շատ հազուադէպօրէն,
երկրորդ հազարամեակի բովանդակ եր-
կարութեան ընթացքին, արդէն կ'անցնի
ներկայ մեր ուսումնասիրութեան սահ-
մանները¹¹³:

կոս» յորջորջումին մասին. որոնց տրուած
հմտալից պատասխանները ներմուծուած են
ներկայ ուսումնասիրութեան մէջ: Հուսկ՝
Վսեմ. Ծիր. Աղաճանեան, որ կը նախագահէր
օրուան հաւաքովին, շնորհաւորական աղնիւ
արտայայտութիւններով նշած է ներհուն այս
բանախօսութեան արժէքը, եւ գոված՝ Հա-
մաժողովի կազմակերպիչները:

Ուսումնասիրութիւնը լոյս տեսած է Փրան-
սերէն լեզուով, նոյն Համաժողովի դրժերու
Ժողովածուին մէջ, «I Patriarcati Orien-
tali nel primo millennio» (Or. Chr. An.
181, էջ 137-178): Ներկայ հայերէն հրատա-
րակութիւնը վերամշակուած է Հեղինակէն,
իմրագրութեան հրաւէրով, որուն համար կը
յայտնենք ջերմ շնորհակալութիւն. (Մանօք-
ԽՄԲ.):

ՆՈՐԱԳԻՒՏ ՊԱՐԱԿԱՆՈՆ ՇԱՐԱԿԱՆՆԵՐ

Հրտ. Հ. ՍԱՀԱԿ ձԵՄՁԵՄԵԱՆ

1911ին, էջմիածնի միաբաններէն Սա- հակ Վրդ. Ամատուելի՝ հմտալից ուսում- նասիրութեամբ հրատարակած է հատոր մը «Հին եւ նոր պարականոն կամ անվաւեր շարականներ» տիտղոսով, որ կը պարու- նակէ 270 արժէքաւոր շարականներ, հա- ւաքուած 70է աւելի ձեռագիր Շարակնոց- ներէ: Այս մեծարժէք հատորը աչքի առ- նէրէ: Ս. Ղազարի 100է ընդհանրաւոր, քննեցինք Ս. Ղազարի 100է աւելի ձեռագիր Շարակնոցները, հաւա- քելով այն նորագոյն անտիպ շարական- ները, որոնք դուրս մնացած էին Ամատու- ելի Վրդ. Ամատուելի հմտորէն. այսպէս, մեր նիւթ վերոյիշեալ հատորէն. այսպէս, մեր մատենագրութեան մէջ էին մնար այլեւս մեծ թիւով անտիպ շարականներ. իսկ ե- թէ յիշենք 1911 թուականէն ետք պարա- կական կերպով հրատարակուած ան- վաւեր շարականները Հանդէս Ամսօրեայի (1938, էջ 105) եւ Սիոնի մէջ (1941, էջ 74-75. 1947, էջ 385-386, 454-455), որոշ չափով մը կրնանք վստահութիւնն ունե- նալ թէ այսօր ամբողջութիւն մը ունինք մեր ձեռքերուն մէջ:
--

Ներկայ շարականներէն դուրս մնացած
են «Կիլիկեան» կոչուած շարականները,
զորում Գրիգոր Անաւարդեցիէ, որոնք կը
ձեւացնեն առանձին հատոր մը: Այդ շա-
րականներէն ոմանք մտած են 1911ին հրա-
տարակուած հատորին մէջ. սակայն մենք
զանց ըրինք, որովհետեւ անոնք ոչ միայն
շատ են թիւով, այլ նաեւ առանձին ու-
սումնասիրութեան կը կարօտին:

Ահաւասիկ ցանկը Ս. Ղազարի այն ձե-
ռագիր Շարակնոցներուն, որոնք կը պա-
րունակեն պարականոն շարականներ, ի-
րենց համապատասխան նշանատառերով.

Նշան	Ձեռ. քիւ	Թուական
Բ	943	ԺԳ-ԺԴ դար
Գ	341	1337
Դ	1487	ԺԴ դար
Ե	1046	»
Զ	525	»
Է	493	ԺԴ-ԺԵ դար
Ը	1674	»
Թ	230	1415
Ժ	624	1464
Ի	366	ԺԵ դար
Լ	249	ԺԶ-ԺԷ դար
Մ	1341	1640
Կ	1364	1654
Ն	131	1657
Շ	2045	1659
Չ	655	1664
Պ	192	ԺԷ դար
Պ	431	»
Ռ	1032	»
Ն	1168	»
Շ	1234	»
Ո	433	ԺԸ դար
Զ	1540	»
Պ	1441	»
Ջ	1275	»
Ռ	773	»

Մեր հաւաքած շարականները երեք տե-
սակի կը բաժնենք.

ա. Պարականոն կրմատ շարականներ:
Սահակ Վրդ. Ամատուելի հրատարա-
կած հատորին մէջ կան կարգ մը շա-
րականներ (էջ 13, 23, 71, 87, 142), ո-